2016, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (468)

Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարան

Օգոստոսի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով ժամանեց Հնդկաստանի Հանրապետություն՝ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարան, ուր այժմ ուսանում է 55 սան՝ Հայաստանից, Իրաքից եւ Իրանից:

Այս բերկրալի առիթով տեղի ունեցավ հանդիսություն եւ ընդունելություն:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, ապա հնչեցին Հնդկաստանի, Հայաստանի եւ Ճեմարանի օրհներգերը:

Բարիգալստյան խոսք ասաց հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Մովսես աբեղա Սարգսյանը՝ ճեմարանի նկատմամբ դրսեւորվող մշտական ուշադրության եւ հոգատար վերաբերմունքի համար տեսչության, դասախոսական կազմի եւ աշակերտության անունից խորին երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետին: Հայր Մովսեսը տեղեկություններ փոխանցեց նաեւ 1821 թ. հիմնադրված եւ Սփյուռքում ցայսօր գործող ամենահին կրթօջախի գործունեության եւ աշակերտների ունեցած հաջողությունների մասին:

Ցերեկույթի ընթացքում ճեմարանի սաները հանդես եկան ազգային երգ ու պարով եւ գեղեցիկ բեմականացմամբ:

Հանդիսության ավարտին իր օրհնության խոսքը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց հայր Մովսեսին, Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության անդամներին, ճեմարանի տեսչական կազմին, ուսուցիչներին եւ սաներին՝ գոհունակությամբ ընդգծելով հայրապետական նախորդ այցելությունից հետո ճեմարանի կյանքում արձանագրված առաջընթացն ու ձեռքբերումները:

Նորին Սրբությունը մեծապես կարեւորեց պատմական այս կրթական հաստատության առաքելությունը՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում եւ հորդորեց նույն նախանձախնդրությամբ եւ ջանադրությամբ շարունակել կերտել փառքը Հայոց մարդասիրական ճեմարանի եւ ազգին պարգեւել հայրենասեր ու եկեղեցանվեր հայորդիներ:

Օգոստոսի 18-ին Գարեգին Բ Հայրապետը հանդիպումներ ու առանձնազրույցներ ունեցավ ճեմարանի տեսչության եւ ուսուցչական կազմի հետ: Նորին Սրբության մասնավոր թելադրությունն էր՝ ամեն ջանք գործադրել ճեմարանի կրթական մակարդակը բարձր աստիճանի հասցնելու համար:

Նույն օրը Նորին Սրբությունը մտերմիկ ու երկար հանդիպում ունեցավ աշակերտների հետ՝ զրուցելով նրանց առօրյայից, կրթական գործընթացից եւ հուզող խնդիրներից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ ճեմարանի կառավարիչ հայր սուրբի եւ կառավարչի օգնական Վարազդատ սրկ. Քոչարյանի, շրջեց ու մանրամասն ծանոթացավ ճեմարանի եւ սաների կեցության պայմաններին՝ անհրաժեշտ ցուցումներ տալով դրանք առավել բարվոք դարձնելու համար:

Այցի օրերին Նորին Սրբությանն ուղեկցում էին Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության ավագ անդամներ տիար Սունիլ Սոբթին եւ տիկին Սյուզան Ռուբենը:

Հայրապետական մաղթանք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով

Օգոստոսի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 65-րդ տարեդարձի կապակցությամբ Միածնաէջ Մայր տաճարում կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբության քաջառողջ կյանքի, կենաց արեւշատության եւ Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության համար:

Սկզբում մատուցվեց ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը:

Հավարտ սրբազան Պատարագի արարողության, հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի, Մայր տաճարի Ավագ խորանում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Բերկրալի օրվա առիթով ներկա հավատավոր հայորդիներին ու ուխտավորներին դիմեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը՝ ներկաներին հորդորելով հոգեւորականաց դասի հետ միասին իրենց աղոթքներով Ամենակալից երկար տարիների արդյունաշատ հովվապետություն հայցել Լուսավորչի 132-րդ գահակալի՝ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար:

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռում

Օգոստոսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ շուքով նշեց Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը: Այս բերկրառատ օրվա կապակցությամբ Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

«Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին այսօր տոնախմբում է հիշատակությունը հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած մի դեպքի, որ կապված է մեր Տիրոջ մոր եւ Ընդհանրական Եկեղեցու մեծագույն բարեխոս սրբերից մեկի՝ Աստվածամայր ս. Կույսի՝ դեպի երկինք վերափոխման հիշատակության հետ: Հայ Եկեղեցին դարերի ընթացքում մշտապես անդրադարձել է Աստվածամորը՝ իբրեւ մարդկային ցեղի, իբրեւ մայրության, իբրեւ Աստծո խոսքի հնազանդության գերագույն եւ կատարյալ օրինակի: Աստվածամորն են ընծայվել բազմաթիվ ստեղծագործություններ, տաղեր, գանձեր, հոգեւոր երգեր ու շարականներ եւ բազմատեսակ աղոթքներ: Հայ ժողովուրդը մշտապես անդրադարձել է Աստվածամոր կերպարին ու նրա արժանավորությանը... Եթե առաջին կնոջով՝ նախամայր Եվայով, մեղքը եւ դատապարտությունը մտան մարդկային կյանք, ապա Աստվածամոր կերպարով տրվեց մարդկային ցեղի փրկության ճամփան: Աստվածամոր մեծությունը ոչ միայն այն կարեւոր դրվագի մեջ է, որ Աստվածածինն աշխարհ բերեց, իր մարմնի հետ միախառնեց Աստծո Ս. Հոգու այցելությունը եւ դարձավ այն ոսկի տապանակը, որտեղից հայտնվեց համայն մարդկության բանականության ճշմարիտ Լույսը, այլեւ իր օրինակելի խոնարհությամբ եւ կանացիությամբ հետեւեց Տիրոջը՝ ընկալելով եւ հասկանալով Նրա բերած զոհողության, խաչի, փրկության եւ սիրո խորհուրդը...

.... Եկե՛ք աղոթենք, որ Աստվածամայրը դառնա մեր բարեխոս եւ միջնորդ մայրը, որպեսզի այդ միջնորդության եւ բարեխոսության արդյունքում մեր Տեր եւ Փրկիչը թագավորի մեր կյանքում, եւ այն դառնա Տիրոջ փառաբանության ճշմարիտ ընթացք: Աստվածամոր մշտամրմունջ բարեխոսությունը թո՛ղ ամենքիս պարգեւի շնորհք, սեր եւ խաղաղություն»,- ասաց Վարդան սրբազանն իր քարոզում:

Հավարտ ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ոսկան արք. Գալփաքյանի, Ս. Տրդատի բաց խորանում կատարվեց Խաղողօրհնեքի արարողություն:

Վերջում օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց «Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերության» նախագահը

Օգոստոսի 29-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեց «Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերություն» միջազգային հասարակական կազմակերպության նախագահ Սերգեյ Ստեպաշինի գլխավորած պատվիրակությանը:

Հյուրերին ընդունեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արաբողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը: Նաթան սրբազանն ընկերության նախագահին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը:

Սրբազան հայրը, շնորհավորելով Ս. Ստեպաշինին՝ «Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերության»՝ Հայաստանում մշտական ներկայացուցչություն բացելու կապակցությամբ, մեծապես կարեւորեց ընկերության առաքելությունը՝ դեպի տարբեր երկրներ ուխտագնացությունների, կրոնական զբոսաշրջության զարգացման, գիտական ուսումնասիրությունների իրականացման եւ մասնավորապես Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների իրավունքների պաշտպանության գործում:

Ընկերության նախագահը, ուրախություն հայտնելով Ս. Էջմիածին այցի առիթով, անդրադարձավ ընկերության ներկայիս գործունեությանն ու ապագա ծրագրերին, գոհունակությամբ արձանագրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հետ սերտ համագործակցությունը:

Զրույցի ընթացքում Նաթան սրբազանն ու «Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերության» նախագահը նաեւ կարեւորեցին Քրիստոնեական Եկեղեցիների ջանքերի մեկտեղումը՝ ի խնդիր բարօր ու ապահով աշխարհի կերտման:

Վերջում Սերգեյ Ստեպաշինը Նաթան արքեպիսկոպոսին փոխանցեց միջազգային կազմակերպության խորհրդի որոշմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին տրված՝ ընկերության բարձրագույն պարգեւը՝ «Բեթղեհեմի աստղ» շքանշանը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածին այցելեցին Օլիմպիական խաղերի մեդալակիրները

Օգոստոսի 29-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանն ընդունեց օգոստոսի 5-ից 21-ը Բրազիլիայում անցկացված 31-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիրներ ըմբշամարտիկ Միհրան Հարությունյանին եւ ծանրամարտիկ Սիմոն Մարտիրոսյանին՝ ուղեկցությամբ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի փոխնախագահ Սամվել Գեւորգյանի եւ Ազգային ըմբշամարտի ֆեդերացիայի փոխնախագահ Արսեն Բադալյանի:

Սրբազան հայրը մարզիկներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու շնորհավորանքները՝ Օլիմպիական խաղերում բարձր ցուցանիշներ արձանագրելու առիթով: Սրբազանը, անդրադառնալով Օլիմպիական խաղերի արդյունքներին, վստահություն հայտնեց, որ մեդալակիրներն իրենց հաղթական ոգով օրինակ կծառայեն երիտասարդ սերնդի համար: Նա նաեւ կարեւորեց այն իրողությունը, որ հայ մարզիկներն իրենց հաջողություններով օգտակար նպաստ են բերում հայ ժողովրդին՝ սպորտի միջոցով ճանաչեցնելով Հայաստանը ողջ աշխարհին:

Մարզիկները խորին շնորհակալություն հայտնեցին ընդունելության եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից հայ մարզիկների նկատմամբ մշտապես ցուցաբերվող ուշադրության համար: Նրանք վստահեցրին, որ Ս. Էջմիածնի օրհնությունն ավելի մեծ ուժ կհաղորդի իրենց՝ հետագայում եւս հաջողությամբ հանդես գալու սպորտային տարբեր հարթակներում:

Վերջում Արշակ եպս Խաչատրյանը հաջողություններ մաղթեց օլիմպիականներին՝ միշտ բարձր պահելու համար Հայաստանի մարզական պատիվը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Իտալիայի նախագահին

Օգոստոսի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլային՝ Կենտրոնական Իտալիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի կապակցությամբ:

Հայ Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատավոր հայ ժողովրդի անունից Նորին Սրբությունը վշտակցություն է հայտնել Իտալիայի նախագահին, ողբերգության զոհերի սգակիր ընտանիքներին եւ Իտալիայի ողջ ժողովրդին:

«Ի խորոց սրտի աղոթում ենք, որ բազումողորմն Աստված Իր երկնային բարձունքներում լույսերի եւ խաղաղության մեջ ընդունի ննջեցյալների հոգիները եւ Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգեւի նրանց հարազատներին: Այլեւ Տիրոջ զորակցությունն ենք հայցում բոլոր վիրավորներին եւ մաղթում շուտափույթ ապաքինում»,- ասված է Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցագրում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որ ամենօրհնյալ Աստված ապահով ու անփորձանք պահի Իտալիան ու նրա քրիստոսասեր ժողովրդին:

Կարգալույծ են հռչակվել Հովհաննես Սահակյան եւ Հայրիկ Հովհաննիսյան աբեղաները

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբաներ Հովհաննես աբեղա Սահակյանը եւ Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը:

Հայրապետական տնօրինության համար հիմք է հանդիսացել վերջիններիս կողմից ծառայության վայրը ինքնակամ լքելու փաստը:

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ դասվում են աշխարհականների շարքը եւ կկոչվեն իրենց ավազանի անուններով՝ Վարդգես Սահակյան եւ Հովիկ Հովհաննիսյան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ Մ. ԽՐԻՄՅԱՆԻ «ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ» ԵՐԿՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 15

Դաստիարակության մեջ ծնողների անձնական օրինակը մեծ նշանակություն ունի երեխայի համար. «.... մի բարի օրինակ առաւել ազդու եւ տպաւորիչ է, քան հազար խրատ...» (էջ 170): Այստեղ գործ ունենք դաստիարակության մի մեթոդի՝ օրինակի հետ, երբ երեխայի մեջ առաջ է գալիս այդպես գործելու ցանկություն՝ օրինակ-հեւարանից օգտվելով: Ըստ այդմ՝ կարեւոր նշանակություն ունի ընտանիքի անդամների միջեւ պատասխանատվության եւ հարգանքի զգացումը, սիրո ու ջերմ հարաբերությունների վրա հիմնված փոխհամաձայնություն հաստատելը: Ըստ Խրիմյան Հայրիկի՝ երեխան ինչ որ ծնողների բերանից լսի ու ինչ օրինակ նրանց կյանքում տեսնի, դա է կարծելու բարի ու ճիշտ եւ առաջնորդվելու է դրանով: Դրա համար նա խրատում է ծնողներին նախ իրենց կյանքն ուղղել, ապա նոր իրավունք կտանան դաստիարակելու երեխաներին: Գործնական կյանքի հետ կապը պետք է լինի գործուն, որպեսզի երեխան չշեղվի: Դրա ցայտուն օրինակն է նրա բերած խեչափառի (խեցգետին) առակը. խեչափառը, ծուռ քայլելով հանդերձ, դաս է տալիս ձագին ուղիղ քայլել, ճարտար ձագն էլ պատասխանում է, որ ծուռ քայլելն է տեսել նրանից: Ծնողներն էլ, խուսափելով նման դիպուկ ու ցավալի պատասխան ստանալուց, պետք է սեփական օրինակով խրատեն երեխային: Մեծ մանկավարժ Կոմենսկին եւս նշում է. «Առանց օրինակի ոչինչ չես սովորի»:

Ըստ Խրիմյան Հայրիկի՝ ընտանեկան դաստիարակության համար կարեւոր նշանակություն ունի չափավորությունը. երեխային պետք չէ անընդհատ պատժել եւ պետք էլ չէ անընդհատ երես տալ նրան, կատարել բոլոր պահանջները, «վասն զի չափազանց սէրը՝ չափազանց ազատութիւն եւ համարձակութիւն հառաջ կը բերէ տղայոց դիւրազգաց եւ անհաստատ բնաւորութեան մէջ, ... իսկ չափազանց խստութիւնը կը ճնշէ եւ կը ջլատէ տղայոց բնաւորեալ աշխոյժ եւ զուարթ ոգին...» (էջ 169): Հաշվի առնելով դաստիարակության խթանման՝ պատժի եւ խրախուսանքի մեթոդները՝ պետք է հիշել, որ երկուսն էլ հարկ է լինեն չափավոր, ինչպես նշում է իմաստուն հայրապետը, որպեսզի չվնասեն երեխային:

Անդրադառնալով նաեւ նյութական չափավորությանը՝ նա հորդորում է չափ դնել ընտանեկան պետքերին, դրանց բավարարմանը՝ հիշեցնելով, որ «.... պէտքերն անսպառ են, զորս օր ըստ օրէ կը հնարէ Եւրոպիոյ ձեռարուեստ հանճարը, եւ մարդոյն ցանկութիւն եւ հաճոյքը անհուն անսահման են, եթէ չափ չը դնենք՝ մարդ մի անգէտ մանուկ է, կը վազէ միշտ դէպի սիրուն խաղալիքները» (էջ ԺԳ-ԺԴ):

Մայրերին հայրապետը հիշեցնում է, որ. «Կնոջ ճշմարիտ փառքն ու զարդը արտաքին փայլող ու մաշածոյ հանդերձին վերայ չի կայանար, այլ առաւել նորա ներքին ոգւոյ արտափայլող գեղեցկութեան վերայ. որ է համեստութիւն, անկեղծ ամուսնասիրութիւն, հնազանդութիւն, զաւակաց դաստիարակութիւն, տանտիկնութիւն, եւ տնտեսող խնայութիւն եւ այլն» (90-91):

Խրիմյան Հայրապետը թախանձագին խնդրում է խաղողի նման օտարների ոտքի տակ ճզմված հայ ժողովրդին. «Ժողովուրդ հայոց, քեզ համար նկարեցի Դրախտի ընտանիքը. կաղաչեմ, որ իբրեւ հայելի դնես աչքիդ հանդէպ. հայիս ու տեսնաս հիւանդ ու հիւծեալ կերպարանքդ...» (էջ ԺԱ): Այսինքն՝ նրա գիրքը կարծես պետք է օրինակ ծառայի յուրաքանչյուր ընտանիքի համար, որպեսզի նոր աշխարհի չար մշակը մոլախոտի նման զեղծումներ չբերի ընտանիք ու չպառակտի այն. «Դրախտի տարաբախտ ընտանիքէն պէտք է օրինակ ու խրատ քաղենք նոր դրախտի որդիքներս, զգուշանանք չարանախանձ օձին հրապուրիչ թոյնէն....» (էջ 9):

Օձը աշխարհի չար մշակն է, դարանակալ թշնամին, չար որոմներ սերմանողը, որ ատելություն է սերմանում, միություն երկպառակտում, վերից վար խռովում ընտանեկան կյանքը:

Մ. Խրիմյանի նկարագրում առանձնահատուկ բարձր աստիճանի վրա են հայրենասիրությունը, ազգասիրությունը: Նա հորդորում է անթառամ պահել սերը հայրենի հողի նկատմամբ, չլքել այն. «.... հայրենի տունը կացէք, մի՛ հեռանայք, սիրեցէք Մասիսը, իւր տապան եւ սուրբ Գրիգոր Կաթուղիկէն, մշակեցէք Նոյայ ծառատունկ այգին՝ Արարատայ դաշտը...» (էջ 28):

Եվ, ի վերջո, պետք է հիշել, որ ընտանեկան դաստիարակությունը պահանջում է երկարատեւ ու համբերատար աշխատանք: Նրա՝ որպես ժողովրդի հոգատար հոր անխոնջ խրատները գնահատելով՝ Ռաֆֆին գրում է.

.... իսկ նա լի հուսով յուր սերմն է ցանում
Եվ ապագայում հունձքի սպասում:

Այսօր էլ տարիների հեռավորությունից իմաստուն հայրապետի խրատները ժամանակի խնդիրներին համահունչ են եւ մտածելու տեղիք են տալիս: Նրա առաջ քաշած խնդիրներն այսօր էլ իրենց հարցադրումներով ծառացած են մեր առջեւ:

Խրիմյան Հայրիկի խոսքերը ներկայումս էլ կոչված են սթափեցնելու հայ ժողովրդին. «Թիմուրլէնկ քո մատաղ զավակները Սեբաստիոյ սեւ հողերուն վերայ սմբակակոխ ջախջախեց ու գրաւեց ազնիւ բողբոջներդ: Իսկ դու նոյն իսկ ընտանեկան տան ու կեանքիդ մէջ՝ նոյն եղեռն կը գործես ու չես իմանար...» (էջ ԺԲ):

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Սկիզբը՝ թիվ 14-15

Նախքան քառյակի ժանրին լրջորեն դիմելը՝ Հովի. Շիրազը 1930-40-ական թթ. ապրել էր յուրատեսակ նախապատրաստության մի տեւական շրջան եւ ժողովրդական խաղիկների, քուչակյան հայրենների, աբովյանական բայաթիների եւ թումանյանական ու չարենցյան ռուբայի-քառյակների նմանությամբ ու աշուղական չափերով գրված բանաստեղծություններով արդեն բավականաչափ յուրացրել էր քառյակագրության գաղտնիքները եւ այդ ժանրաձեւով ստեղծել որոշ հաջողված նմուշներ: Ահա ինչու շիրազյան առաջին քառյակներն արտաքին՝ ձեւական կառուցվածքային յուրահատկություններով նման են նրա՝ վաղ շրջանում աշուղական չափերով գրած բանաստեղծությունների՝ սեմայի, դիվանի, մուխամմազ, դուբեյթ եւ այլն, տներին եւ Թումանյանի ու Չարենցի համաբնույթ ստեղծագործություններին:

«Գարնանամուտ» ժողովածուի որոշ բանաստեղծություններ՝ «Նոր օրոր», «Աղջիկը երգում է», «Հովերն եկան», «Երգ» խորագրերով, արդեն հուշում են դեպի քառյակագրություն եւ ժողովրդական մտածողություն բանաստեղծի հակումները: Ինչ խոսք, վաղ հասունացման շրջանում գրված այդ գործերը դեռեւս բանաստեղծական մեծ խտացումներ ու կատարելություններ չեն, մանավանդ որ նկատելի է ժողովրդականին նմանվելու ճիգը, որ անխուսափելի արհեստականություն է հաղորդել այդ նմանակումներին:

«Գարնանամուտ»-ում առավել հաջողված են այն ինքնատիպ գործերը, որոնք իրենց բովանդակության ու ձեւի յուրահատկություններով ակնհայտորեն տարբերվում էին 1920-30-ական թթ. մթնոլորտում որպես պրոլետգրող հաստատվելու մարմաջ ունեցող բանաստեղծների գրական արտադրանքից եւ այդ բնաբուխ ու ինքնատիպ բանաստեղծի մեծ ապագայի հավաստումն էին: Այս բնույթի գործերն էին արդարացի արժեւորում ժամանակի ողջամիտ գրողներն ու մտավորականները: Սակայն անզեն աչքով էլ նկատելի է, որ խաղիկների նմանությամբ քառատող տներից կազմված հիշյալ բանաստեղծությունները լուրջ նորություն եւ մնայուն արժեքներ չեն:

Որպես հիմնավորում՝ բերում ենք «Գարնանամուտ» գրքում տպված այս կարգի երեք տարբեր բանաստեղծություններից յուրաքանչյուրից միայն մեկ տուն.

Ալագյազին ձյուն է եկել,
Հերրդ հանդից տուն է եկել,
Օրոր ասեմ,- քնիր անուշ,
Քո աչքերին քուն է եկել:
(«Նոր օրոր», Շիրազ Հ., Գարնանամուտ, էջ 81):

Սրտի բացված վարդը՝ հիմա,
Սրտով սիրած մարդը՝ հիմա,
Սիրած յարս՝ նոր - աշխարհում՝
Նոր - աշխարհի զարդը հիմա:
(«Աղջիկը երգում է», նույն տեղում, էջ 83):

Հովերն եկան սարերեն,
Խաբար բերին իմ յարեն.-
Յարդ ղըռերն է վարել,
- Դուշմանի դուռն է քարել:
(«Հովերն եկան», նույն տեղում, էջ 84):

Անմիջապես նկատվում է, որ բերված օրինակները պարզապես «նմանեցված» են ժողովրդական խաղիկներին, սակայն հեղինակի փորձառությունը, գրական վարպետությունը դեռեւս չեն բավարարել դրանք ներկայացնելու որպես բանաստեղծական ինքնուրույն միավորներ. ինքն էլ ինչ-ինչ անկատարություններ զգալով՝ դրանք միավորել է համապատասխան բանաստեղծություններում, ուր նրանց պակասությունները ցայտունորեն նկատելի չեն:

Նախորդների ավանդների յուրացումով՝ նա վաղ շրջանում դեռեւս լիարժեք չէր ըմբռնել քառյակի ժանրային յուրահատկությունները ու դեռեւս 1940 թ. «Երգ Հայաստանի» գրքում նույնպես տպագրել էր քառյակների կամ խաղիկների ձեւով հյուսված տներով բանաստեղծություններ: Սակայն ահա նույն ժողովածուում տպված «Լինի» բանաստեղծության քառատող տների մտքի կապը, բացի առաջին եւ երկրորդ տներից, այնքան թույլ է, որ դրանք, առանձին վերցրած, ինքնուրույն քառյակ-խաղիկների տպավորություն են թողնում, անգամ թվում է՝ միմյանց շարունակություն էլ չեն: Եվ եթե առաջին տունը չկրկնվեր որպես վերջին տուն եւ հեռավոր բովանդակային կապ չունենար մյուս երեք տների հետ, ապա դրանք կարելի էր համարել ինքնուրույն քառյակ-խաղիկներ: Սակայն բանաստեղծն ինքը, նրանց սակավ ինքնուրույնությունը եւ նախորդի ու հաջորդի տրամաբանական կապը նկատի ունենալով, գիտակցաբար միավորել է մեկ բանաստեղծության մեջ: Ահա խաղիկանման հյուսվածքով այդ բանաստեղծության չորս տները.

Գիշեր գիշերով լինի,
Գիշերն հուշերով լինի,
Լինի սիրած իմ վարդը,-
Թեկուզ փշերով լինի:

Ասեմ՝ անուշ, ա՛ռ սիրտս,
Ա՛ռ քո սիրով վառ սիրտս,
Ասլան ես դու , անո՛ւշ յար,
Ա՛ռ սպիտակ գառ սիրտս:

Մեզնից բացի տեր չկա,
Սրտումս ուրիշ սեր չկա,
Սրտիս համար, քո սիրով,
Ա՛խ, քո ճամփին ծեր չկա:

Դոշս բանամ՝ վարդ եմ ես,
Վարդի դոշին զարդ եմ ես,
Ե՞րբ ես գալու, քո ճամփին,
Անո՛ւշ, անո՛ւշ դարդ եմ ես:
(Շիրազ Հ., Երգ Հայաստանի, Եր., 1940, էջ 147):

Կարելի է ասել՝ նույն գրքի «Աշըղ Շիրազ» բաժնում արդեն մտքի լիակատար անկախություն ունեն «Ժողովրդական» վերնագրի տակ միավորված հինգ քառյակ-խաղիկները, որոնք հեղինակն ինքն է միմյանցից տարանջատել աստղանիշերով: Ուրեմն՝ **բանաստեղծության մաս կազմող եւ մտքի հարաբերական ինքնուրույնություն ունեցող քառատող տան** եւ **ավարտուն միտք ու հնչերանգային ավարտ ունեցող ինքնուրույն քառատող բանաստեղծության** հստակ տարբերակումով է Հովի. Շիրազն արարել իր քառյակները: Համոզվելու համար վերցնենք, օրինակ, 1939 թ. գրված «Արարատ» բանաստեղծության տներից վերջինը, որ թեեւ քառյակի կառույց ու հանգավորում, արտաքին տեսք ունի, սակայն քառյակ կոչվելու համար ունի մի էական ակնառու պակասություն.

Նա՛ է կարոտն իմ անսահման՝ սարերն
ի վեր, ի վեր Մասիս,
Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան
դարերն ի վեր, ի վեր Մասիս,
Կտանեմ սիրտս վիրավոր որպես դրոշ՝
Մասիսն ի վեր,-
Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն
ի վեր, ի վեր Մասիս:

Երկու բեյթերի միավորումով կազմված քառատող այս տունը (մեկ կից հանգավորմամբ երկտող «արքայական տուն» եւ մեկ բեյթ՝ առաջին տողը անհանգ) իր հանգավորմամբ, տաղաչափական անդամների շեշտադրմամբ իրականում միայն արտաքին նմանություն ունի քառյակի հետ, սակայն դեռեւս քառյակ չէ այն, որովհետեւ, թեկուզ որպես ընդհանրացնող ավարտ եւ բանաստեղծությունը եզրափակող տուն՝ մտքով ամբողջական եւ ինքնուրույն չէ, այլ նախորդ տների շարունակությունն է կամ տրամաբանական եզրահանգումը եւ կախված է նրանցից:

Շարունակությունը՝ էջ 4

Սարգիս վարդապետ եւ գիտական Շնորհալու՝ Գրիգոր Պահլաւունուն ուղղուած թուղթը պահքի մասին

Սկիզբը՝ թիվ 15

Յունաց Հերակլ թագաւորը բազում յոյն իմաստասէրների եւ հայերից ոմանց ժողովի հաւաքեց Կարին քաղաքում եւ կամեցաւ քննութեան առնել հաւատքի հարցերը: Հայոց Եզր կաթողիկոսը, լինելով տգէտ եւ դպրութեանը խորթ, հաւանութիւն տուեց Քաղկեդոնի ժողովի [որոշումներին] եւ ուրացաւ սուրբ Գրիգորի ուղղափառ հաւատքը, եւ ինքը չարամահ սատակեց: Նրանից յետոյ քաղկեդոնական հաւատքի վեց կաթողիկոս նստեց, եւ ինսունվեց տարի հայերը Քաղկեդոնի հաւատքով շարժուեցին եւ դադարեցին պաս պահել: Բայց Սուրբ Հոգու շնորհներով սրանցից յետոյ Հայրապետութեան Աթոռին ընտրուեց իմաստասէր եւ աստուածեղէն Գրքերին քաջավարժ Յովհան [Գ. Օձնեցին]: Եւ Մանազկերտ քաղաքում բազում եպիսկոպոսների եւ վարդապետների ժողով գումարեց: Եւ հաստատեցին Առաջին հաւատքը, որ սուրբ Գրիգորն էր աւանդել: Եւ [նորից սահմանեցին] Քառասնորդաց պահքը եւ հրամայեցին ուրբաթը պահել եւ՝ ձուկ, իւղ ու գինի չօգտագործել: Սակայն որովայնամոլներից ոմանք աղաչեցին փոքր-ինչ մեղմել [պահանջը] եւ շաբաթ ու կիրակի օրերին կիթ ճաշակել[ու իրաւունք տալ]: Եւ զգուշացաւ սուրբ հայրապետը, թէ յանկարծ այդպիսիները, Քաղկեդոնի ժողովին համաձայնելով, ամբողջ պահքը կվերացնեն: Իսկ նրանք, որ ճգնակեաց են եւ առաքինի, [տարեցտարի] բոլոր ուրբաթները կպահեն՝ մինչեւ վերջն աշխարհի:

Բայց յոյժ զարմանում եմ յոյներից, թէ որտեղի՞ց ընդունեցին կանոնական պահքը խախտելու այս անօրէն կարգերը, որոնց վկայութիւնը ո՛չ մարգարէներն ունեն եւ ո՛չ աւետարանիչները: [Կարգերը], որ[ոնց համաձայն], առանց տարբերութիւն դնելու, ճաշակում են ծովածին բարիքները, ձէթ եւ գինի: Ձուկը[...] վիշապն է, եւ առաքեալը մարմին է կոչում: Այլ է մարմինն անասունների, եւ այլ՝ մարմինը ձկների[...]

Բայց դու այստեղ յիշիր սրբազան այրերին, որ զինուեցին եւ ամրացան պահքով: Մովսէսին նկատի ունեմ, որ քառասուն օր եւ քառասուն գիշեր պաս պահեց, հաց չկերաւ եւ ջուր չխմեց: Նմանապէս եւ Եղիան: Նոյնն արեց եւ Յիսուս Քրիստոս՝ քառասուն օր եւ քառասուն գիշեր պահեցողութեամբ զբաղուեց եւ քաղցեց փորձութիւնից առաջ[...]

Իսկ որ հարցրել էիք, թէ ինչո՞ւ են հայերը ձկնեղէնը, ձէթը, պանիրը եւ իւղը նոյն կարգը դասում [եւ մերժում պահոց օրերին], դրա պատճառն այս է:

Աստուած Մովսէսին հրամայեց ձիթապտղից, զմռնենուց, նարդոսից, կինամոնից, խնկեղբգից, հալուէից եւ օրէնքով սահմանուած այլ պտուղներից շիճուկ պատրաստել*(հմմտ. Ելք Լ. 22 եւ յաջ.)*, որ եւ իւղ սրբութեան անուանուեց: Դրանով հայրապետները եւ թագաւորներն էին օծւում[...] խորհրդածութեան մեռոն են կոչում եւ դրանով են օծում պատարագի սեղանը[...] Իսկ Մատթէոս աւետարանիչը կոյսերի պատմութեան մէջ ասում է. «Երբ տասը կոյսերը փեսային դիմաւորելու ելան, [նրանցից] հինգը յիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն: Եւ իմաստունները ձէթ էին վերցրել, իսկ յիմարները չէին վերցրել: Քիչ օրեր անց, երբ մարեցին նրանց լապտերները, ասացին. «Մեզ ձեր իւղի՛ց տուէք»: Եւ չստացան այն, ինչ հայցեցին *(հմմտ. Մատթ. ԻԵ. 1 եւ յաջ.)*: Եւ որպէս վերեւում գրով դրոշմեցի, աստուածային բոլոր Գրքերը ձէթը իւղ են անուանում, որովհետեւ նոյն զօրութիւնն ունեն լուսաւորելու եւ օծելու, որ [եւ] ասուած է. «Ծերութիւնն իմ պարարտ [կլինի] ձէթով» *(հմմտ. Սաղմ. ՂԱ. 11)*:

Եւ նրանով են կնքւում բոլոր [...] խորհուրդները եւ խօսքը մեր: Խաչը եւ եկեղեցին նրանով են օծում, [նաեւ] հաւատն ամենայն քրիստոնեաների [նրանով է դրոշմւում], մեռոնով, որ սրբութեան իւղ ենք անուանում: Այս է խորհուրդը, որ մի ենք անուանում իւղը եւ ձէթը:

Իսկ թէ ինչո՞ւ է ասւում «ձկնկիթ», որովհետեւ նմանւում է թռչնի [կիթին]: Այս խորհուրդն է պատկերանում ինձ, որովհետեւ օրինադիր Մովսէսն այսպէս է [ասում]. «[Եթէ երկու տղամարդ կռուելիս] հարուածեն մի յղի կնոջ, եւ սաղմը դուրս գայ, քահանաները պէտք է հաւաքուեն եւ տեսնեն՝ ձեւաւորո՞ւել է մանուկը[, թէ՝ ոչ: Եւ եթէ ձեւաւորուել է], կնոջը հարուածողը մահապարտ է, իսկ եթէ չի ձեւաւորուել, մեղաւորն ազատ է արեան [վրէժից]» *(հմմտ. Ելք ԻԱ. 22-23)*: Այսպիսով, քանի դեռ չի ձեւաւորուել ձուի մէջ՝ կիթ է եւ ոչ թէ թռչուն, որովհետեւ արեան զօրութիւն չունի: Եւ բոլոր կենդանիները եւ թռչունները ջրից են գոյանում, ջրից են ծնունդ առնում, որովհետեւ Աստուած ասաց. «Թո՛ղ ջրերը թռչուններ եւ մեծամեծ կէտեր հանեն» *(հմմտ. Ծնն. Ա. 20-21)*, բայց մենք ամենայն ժամ ջուր ենք ըմպում, եւ ոչ թէ կենդանիներ ուտում, որ ջրում են ծնւում եւ են[...] Եւ ամենայն ժամ մենք օդ ենք կլանում շնչափողով եւ ոչ թէ կենդանի անգղ ենք ուտում, մեղու կամ պիծակ: Եւ նոյնը չէ, թէ ծովի խոնաւութիւնը կամ մեղրի քաղցրութիւնն ենք ճաշակում եւ կամ թռչուն ենք ուտում: Եւ այս պատճառով մէկ ենք համարում՝ կէտը, ձուն, իւղը, պանիրը եւ գինին, որպէս գրեցի վերեւում[...]

Համառօտագոյն այսքանը կարճ ի կարճոյ դրոշմեցի Ձեր հարցումների կապակցութեամբ[...]:

Գրաբարից փոխադրեց
Գեւորգ ՄԱԴՈՅԵԱՆԸ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ըստ ռումինահայ տարբերակի

(Վարուժան Ոսկանյան, «Շշուկների մայյան» Ե., 2014, «Անտարես», 492 էջ)

Հայ գրականության գլխավոր հերոսը Հայաստանն է, եւ դա՝ ոչ միայն հայագիր, այլեւ օտարագիր հայ գրողների ստեղծագործության մեջ: Ահա հերթական հրաշքը՝ ռումինագիր Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան» վեպը: Լինելով հեղինակագործված որակյալ թարգմանություն (թարգմանիչ՝ Սարգիս Սելյան)՝ վեպը հավասարապես ունի բնագրային նշանակություն: Սա մի գիրք է, որ իր մեջ կրում է 20-րդ դարի հայ վիպագրության առանցքային ավանդույթը՝ ձեւավորված Չարենցի «Երկիր Նաիրի», Շահնուրի «Նահանջը առանց երգի», Բակունցի «Կյորես», Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», Արմենի «Հեղնար աղբյուր», Մահարու «Այրվող այգեստաններ» երկերում: Այս ավանդույթը կենսաբանորեն ձեւավորեցին նաեւ օտարագիրները՝ Վիլյամ Սարոյանը, Լեւոն-Զավեն Սյուրմելյանը, Մայքլ Արլեն Կրտսերը, Դավիթ Խրդյանը, Փիթեր Սուրյանը, Փիթեր Նաջարյանը, Փիթեր Բալաքյանը, Նենսի Գրիգորյանը, Մարսելա Փոլեյնը (Վարտեվարյան) եւ ուրիշներ:

Եվ ահա Վարուժան Ոսկանյանի այս գիրքը, որ Բուխարեստում ռումիներեն լույս է տեսել 2009-ին, արժանացել է լուրջ ընդունելության եւ թարգմանվել մեկ տասնյակից ավելի լեզուներով:

Հեղինակը ծնվել է 1958 թ. Ռումինիայի Ֆոկշան քաղաքում՝ տարագիր հայի ընտանիքում: Հայտնի դեմք է Ռումինիայում: Ողջունել է Ռումինիայի ազատագրումը խորհրդային գերիշխանությունից, զբաղեցրել նախարարի, Ազգային ժողովի պատգամավորի, սենատորի պաշտոններ: Ներկայումս Ռումինիայի գրողների միության փոխնախագահն է, Ռումինիայի Հայոց միության նախագահը: Բազմիցս եղել է հայրենիքում: Հեղինակ է բանաստեղծությունների երեք ժողովածուի՝ «Կապույտ Շամանը» (1994), «Թագուհու սպիտակ աչքը» (2001), «Հազարաթեւ Հիսուսը» (2005), ինչպես նաեւ պատմվածքների 2 հավաքածուի՝ «Կոմանդոսի արձանը» (1994), «Հարյուր տերեւների խաղը եւ այլ պատմվածքներ» (2013), ստացել է տարբեր մրցանակներ, իսկ «Շշուկների մատյանը» 2013-ին ներկայացվել է Նոբելյանի:

Իսկ ինչո՞ւ «Շուկների մատյան». որովհետեւ բռնատիրական երկրում բոլոր կարեւոր բաներն ասվում էին կիսաձայն, շշուկով, ծածուկ, քանի որ ամեն ինչ պետք է մնար գաղտնի ու չբացահայտվեր: Ամբողջ գիրքն այս հարցի պատասխանն է:

Բառային կառուցվածքով հեղինակը վեպի վերնագիրը զուգահեռում է Նարեկացու «Մատյան ողբերգության» հետ: Երկուսն էլ մատյան են, այսինքն՝ գիրք, ուրեմն նաեւ՝ «Գիրք ճանապարհի», «Գիրք մնացորդաց», «Մշո ճառընտիր», ի վերջո՝ Բիբլիա:

Հաջորդում են բացահայտող եւ լրացնող տողեր. «Մանկությանս տարիներին շշուկների աշխարհում ապրեցի», «Շշուկների մատյանում կգտնեք տարբեր տեսակի անձանց՝ անանուն եւ, հավանաբար, գործող անձինք, ոմանք անցնում են անանուն ու անդեմ», «Անսպասելի բաների մասին խոսքը նման է շշուկների մատյանը գրելուն», «Շշուկների մատյանը մի պատմություն է, որը ոչ ոք լիովին չի պատմում, կարծես ամեն մեկը վախենում էր ամբողջովին հասկանալ՝ այդպիսով փորձելով փրկել իր իմաստազուրկ կյանքը»:

Սա խորհրդային ժամանակների, առավելապես ստալինյան տասնամյակների դառը իրականությունն է, որ Համո Սահյանը ձեւակերպել է այսպես. «Լրտես էր դառնում տանս գերանը», պավլիկմորոզովների պես որդիները մատնում էին հայրերին, հարեւանը՝ հարեւանին, ուստի մարդիկ թաքցնում էին իրենց մտքերը եւ միայն վստահելի միջավայրում խոսում շշուկով, գաղտնագրերով, հիմնական անունները չտալով, ակնարկներով: Այսպիսի գաղտնագրություններով է լեցուն ամբողջ 1920-1960-ական թթ. հայ գրականությունը, հատկապես՝ պոեզիան: Նույնը՝ խորհրդային, Երկրորդ համաշխարհայինից հետո՝ սոցիալիստական համագործակցության երկրների ամբողջ գրականությունը: Ահա երկու խորհրդանշական անուն՝ Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն եւ հետագա շրջանի անտիպ ժառանգությունը եւ Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան» վեպը:

«Շշուկների մատյանը» վեպի գլխավոր հերոսներն են Հայոց Պատմությունը եւ Հիշողությունը, այլ կերպ՝ պատմական հիշողությունը, որի կրողը հեղինակի պապն է՝ Կարապետ Ոսկանյանը, եւ պապի սերդնակիցներն են: Հիշողության կենտրոնում 1915 թվականն է ու «Նեմեսիս» ծարգիրը, որի գործողության մասնակիցներից մեկը եւս այս վեպի հերոսներից է՝ պապի ընկերը:

Ազգային ցավն ամենուր նույնն է՝ թե՛ նրանց համար, ովքեր 1915-ից հետո հանգրվանեցին Հայաստանի պահպանված տարածքներում եւ թե՛ նրանց, ովքեր ստիպված դարձան սփյուռքահայ: Վարուժան Ոսկանյանն այդ ազգային ցավի տերն է եւ ոչ թե դասալիք: Դասալիքներն ուծանում են, փոխում ազգությունն ու վերանում, հայոց ոգու կրողները դիմակայում. լեզվի կորստին փոխարինում է թանձր հիշողությունը:

Տեսադաշտում 20-րդ դարն է՝ հայերի նոր հոսքով: Հեղինակը չի խորանում ռումինահայության պատմության մեջ, ներկայիս ռումինահայերի նախնիներն Անի մայրաքաղաքից էին, որոնց 18-րդ դարում պարտադրվեց կաթոլիկություն, եւ բոլորն էլ ձուլվեցին, վերացան: Նոր հայերը եղեռնից փախած արեւմտահայեր են, որոնց՝ շշուկներով փոխանցված հիշողությունը, ահա, ամբարված է այս գրքի մեջ:

«Շշուկների մատյանը» կառուցվածքով բարդ, համապատկերային վեպ է: Կերպարները հաջորդում են իրար, լրացնում մեկը մյուսին ու շարունակում, հերթով կանգնում կողք կողքի՝ ստեղծելով համահավաք մի խմբանկար, որ հենց այդ պատմության եւ հիշողության կոթողն է:

Մի տեղ վեպի այսպիսի բնութագրություն է տալիս. «Շշուկների մատյանը վերածվում է աստիճանական մի իրականության, որ բազմապատկվում է ինքնին, ինչպես դեմ դիմաց դրված երկու հայելի», այսինքն՝ անդրադարձներ ժամանակի (օրվա, պատմության) տարբեր բեկումներով, որ մարմնավորում են հիշողությունը: Առանցքային ուղղագիծ դիպաշար գոյություն չունի, կան իրար լրացնող գործողություններ, իրար փոխարինող անուններ, որոնք շշուկներից վերականգնում, չվերականգնվածը գաղտնազերծում, նախադրյալները ներկայացնում եւ պատմում է հեղինակը: Այստեղից իրեն վերապահած դերը՝ պատմիչ:

Այո՛, հեղինակը պատմում է՝ մնալով արձակի ավանդական ձեւի մեջ, բայց փոխում է համակարգը՝ ստեղծելով պատմության շերտեր, որոնք ե՛ւ հորիզոնական հարթությամբ դասավորվում են իրար վրա, ե՛ւ ուղղահայաց զարգացումով անցնում մեկը մյուսի միջով:

Իր՝ Գրողի կերպարը կա որպես ժամանակների կապը շղթայող հիշողություն՝ ի՞նչ լսեց, լսածն ինչպե՞ս մտապահեց, ի՞նչ փրկեց եւ ի՞նչ փոխանցեց: Այս է իրեն վերապահված տեղն ու դերը՝ որպես ազգային խոր ավանդույթների կրող եւ փոխանցող:

Ինքն իր մանկության տարիների վերապրումների մեջ է, որոնք գունավորում եւ կերպավորում են նրա հիշողությունը: Կառուցվածքը՝ 12 գլուխ, ինչը եւս խորհրդանշական է՝ 12 վիլայեթների, 12 առաքյալների մտաբերումով:

Շարունակությունը՝ էջ 6

ՇԻՐԱԶՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԿԵՆԽԱՐՀԸ

Սկիզբը՝ էջ 3

Ամբողջ բանաստեղծության՝ մտքի հարաբերական անկախություն ունեցող նախորդ տների՝ որպես նախադրյալի, հիմքի վրա է ձեւավորվում, նրանցից է բխում եզրափակող այս միտքը: Դա հասկանալի է դառնում բանաստեղծական տան սկզբնատողից՝

Նա՛ է կարոտն իմ անսահման՝ սարերն ի վեր, ի վեր Մասիս,- որով սկսվում է միայն մեկ՝ վերջին տունը, սակայն նրանով չի կարող ամբողջ բանաստեղծությունն սկսվել: Իսկույն կծագի տրամաբանական հարց՝ ի՞նչն է ընդգծված անսահման կարոտը: Իսկ թե ի՛նչ է եզրափակիչ տան առաջին տողում այդ **նա** ձեւական ենթակայի բովանդակությունը, կարող է հասկանալի դառնալ միայն ընթերցելով նախորդ երեք քառատող տները, որոնց խորքում են հարցադրման տրամաբանական նախադրյալները.

Երբ օրոցքում աչքս բացի՝
Մասիս սարերն հեռվում տեսա,
Գերված տեսա ու ես լացի՝ հայոց
ցավերն հեռվում տեսա,
Ա՛խ, ես մանկուց երազեցի սուրալ
ազատ Մասիսն ի վեր,-
Հովտում այրվող սիրտս բացի,
բայց մով սարերն հեռվում տեսա:

Ա՛խ, ասացին՝ ճամփա չկա քարերն
ի վեր, ի վեր Մասիս,
Կընկնի վիհերն՝ ով բարձրանա
սարերն ի վեր ի վեր Մասիս,
Մենակ դու չես, սիրտ իմ, լացած
աչքդ հառե Մասիսն ի վեր,-
Արքաներդ են ընկել անմահ՝ դարերն
ի վեր, ի վեր Մասիս:

Մի՞թե իրավ անհաս ես դու, ա՛խ,
իմ երազ Մասիսն ի վեր,
Մի՞թե մի օր չեմ հասնելու
աստեղնահաս Մասիսն ի վեր,
Նախահայրս է սանդուղք դրել
աստղերն ի վեր, ի վեր Մասիս,
Ա՛խ, մի՞թե չեմ համբուրվելու
իմ աստղի հետ Մասիսն ի վեր:

(Շիրազ Հ., Քնար Հայաստանի, Եր., 1958, էջ 158):

Իսկապես էլ. բանաստեղծության այս երեք տներն ուշադրությամբ ընթերցելուց հետո է միայն հասկանալի դառնում նախապես դիտարկված վերջին տունը՝ որպես նախադրյալներից մակաբերվող տրամաբանական ընդհանրացում եւ ավարտ: Այնինչ քառյակը մտքի լիակատար անկախություն ունեցող տրամաբանական կառույց է՝ շատ նման փիլիսոփայական-տրամաբանական սիլլոգիզմի՝ իր նախադրյալ սկզբնատողով, երկրորդ ու երրորդ բովանդակային խարիսխի դեր կատարող տողերով, եզրահանգում-ընդհանրացում չորրորդ տողով, եւ հատուկ բառընտրությամբ կազմված այս չորս տողերի միասնությամբ է կերտվում խոհական ու զգացմունքային հագեցվածությամբ ինքնուրույն բանաստեղծությունքառյակը, որը, ներդաշնակ ու կուռ, միաձույլ կառույց լինելով, ամենեւին չի հանդուրժում որեւէ բառի պակասություն կամ հավելադրում:

Աբովյանական բայաթի-խաղիկների բնորոշ յուրահատկություններից մեկը միեւնույն քերթվածի մեջ երկու եւ ավելի համանուն կամ հարանուն տարիմաստ բառերի նպատակային կիրառությունն է հանգավորված տողավերջում:

Այդպիսի բառեր կամ բառակապակցություններ Խ. Աբովյանը գործածել է սովորաբար բայաթի-քառյակների առաջին եւ վերջին տողերում, ինչպես՝ **Անի** (հայոց մայրաքաղաքի անունը) եւ **անի** («անել» բայի ըղձական ապառնի եզակի երրորդ դեմքը), **ձեռ քաշի** (թող հեռացիր) եւ **ձեռ քաշի** (ստորագրիր իմաստով), **ուրուր** գիշատիչ թռչնի անվանը հանգավորման համար զուգադրված է տեղ մատնանշող **ո՞ւր, ո՞ւր** հարցահարաբերական կրկնվող դերանունը, **բանջարի** (բանջար քաղելու) եւ **բան չարի** (ոչինչ չարի նշանակությամբ), Կարկուտն դիպավ մեր **պտղին** (միրգ, բերք) եւ Նրանք լիս չեն տալ իմ **պտղին** (**աչքին** իմաստով) եւ այլն:

Շարունակությունը՝ էջ 7

Հայրենասիրական ողբը

Սկիզբը՝ թիվ 11, 13-15

Շնորհալին իր նախընտրած եղանակին հոգեբանի նրբազգացողությամբ չի դավաճանում: Քաղաքը միշտ ընկալվում է որպես հայ մայր, որը դարերի իր կենսագրությամբ վերապրում է ժողովրդի պատմության փորձությունները. Նա կորցրել է իր սիրասուն զավակներին, ամուսնուն, բարեկամներին եւ հիմա խնդրում, հայցում է, որ մարդիկ բարեգութ լինեն, փրկեն իրեն անլուր տառապանքներից եւ կործանումից.

Լացէ՛ք, լացէ՛ք բարձր ի ձայնի,
զիս ողբացէ՛ք կողկողալի,
Ես՝ Եդեսիա, Ուռհա քաղաք,
որդեկորույս, որբ եւ այրի,
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
*կականալիր *Լ՝ւ ողորմելի:*
Զքօղս ի գլխոյս մերկանալով,
զիմ պատառեմ ծածկոյթ զարդի,
Փետտեմ զվարս իմ ցանկալի,
խզեմ զհերս անխնայելի,
Քարամբք ծեծեմ զկուրծս սրտի,
բախեմ զերեսս իմ ապտակի.
Նստիմ ի սուգ ի տան մթի,
որպէս օրէն է սգաւորի,
Եւ փոխանակ որդան զգեստի՝
սեաւ զգենում գոյն տխրելի,
Հեղում արտօսր անչափելի,
յորդ եւ առատ նման գետի:
Քանզի առա՛կ եղէ յերկրի,
տիեզերաց նախատելի,
Եւ անցաւորք ճանապարհի
վա՛յ ի վերաց ասեն վայի:
(Էջ 43-44):

Սկսվածքը, ահա, նրա կոչն է, կոչը մի կնոջ, որը եղերամայր է դարձել եւ ուրիշներին իրեն սգակցելու է հրավիրում: Նա դիմում է քրիստոնեական աշխարհի նշանավոր կենտրոններին՝ նրանց առաջ բացելով իր վշտոտ ոգին: Ողբակցության են կանչվում «Երուսաղեմ, քաղաք մեծի թագաւորին երկնաւորի», «Եւ դու Հռոմ, մայր քաղաքաց, գերապայծառ եւ պատուելի», նաեւ «Կոստանդեայ թագավորի» քաղաքը, Եգիպտոսի Ալեքսանդրիա մայրաքաղաքը: Դիմում է նաեւ Մեծն Հայքին.

Բայց բանս մեր փոփոխեսցի,
յելս արեւու վերադարձցի
Առ Մեծն Հայք՝ Տուն Թորգոմի,
ազգ եւ ծնունդն Յաբեթի,
Անդ, ուր աթոռ Պարթեւազանց՝
թագաւորացն Արշակունի...
(Էջ 30):

Մտերիմ ողբակից որոնող մայր Եդեսիան իր խոսքին ուղղում է նաեւ Անիին եւ Վաղարշապատին, որոնք գտնվում էին սելջուկ թուրքերի տիրապետության տակ: Շնորհալին հուզիչ տողերով իր ընթերցողների մեջ արթնացնում է հիշատակը Հայոց կորած փառքի մասին. չէ՞ որ Վաղարշապատը, իսկ ավելի նոր ժամանակներում նաեւ Անին եղան մեծանուն գահակենտրոններն Արշակունյաց եւ Բագրատունյաց թագավորների համար: Նա հանդիպադրում եւ իրար է հակադրում Հայոց փառավոր անցյալը եւ թշվառ ներկան.

Բայց եւ զքեզ յայս հրաւիրեմ,
արեւելեան քաղաքդ Անի,
Կցորդ իմոյս լինել ձայնի
եւ սփոփիչ տարակուսի:
Քանզի եւ դու երբեմն էիր
վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
հեռաւորաց փափագելի:
Շինեալ եղեր տուն արքունի
յընտրեալ նահանգդ Շարայի...
(Էջ 36-37):

Այդ հին փառքը վերականգնելու համար Կիլիկիայում հայ տարագիր իշխանները կենաց եւ մահու կռիվ էին մղում, եւ ինչպես հայտնի է, հարյուրամյա նրանց մաքառումը պսակվեց Կիլիկյան հայկական պետականության ստեղծմամբ՝ Լեւոն II Ռուբինյան թագավորի ժամանակ (1198 թ.): Շնորհալին այդ մեծ պայքարի ու հաղթանակի գաղափարական նախապատրաստողներից մեկը եղավ: Իր «Ողբ Եդեսիոյ»-ն դարձավ հայրենասիրական խոհերի մի ներշնչարան: Անի եւ Վաղարշապատ ունեցող ժողովուրդը, ըստ բանաստեղծի, իրավունք չուներ անհովիվ հոտի նման թափառելու եւ անիմաստ կյանք վարելու:

Ողբում մեր առաջ շերտ առ շերտ բացվում են պատմության աղետալի դեպքերի իրական պատկերները, եւ մենք էլ բանաստեղծի հետ միասին համակվում ենք իր քնարական հերոսի ցավերով: Շնորհալին սրտի կսկիծ բուռն ճիչեր է արձակում թշնամիների դեմ, մեղմ ու անուշ, բայց խորին տրտմությամբ լցված՝ հառաչում է Հայաստանի համար, որոնում նրա անցած հին փառքը, որն այլեւս չկա: Եվ այս ամբողջի մեջ մենք՝ ընթերցողներս, տեսնում ենք մի անկեղծ ու կարոտալի վիշտ ու թախիծ՝ վաղուց կորած քաղաքական ազատության համար, տենչանք՝ ունենալու այն հին երկիրը:

Որ անապատն էիր վայրի,
եղեր նման փթթեալ ծաղկի
Եւ կուսական արեամբ ներկեալ՝
պայծառացար ի գոյն վարդի:
Որդիս ծնար յաւազանի,
որ քան զաւազ շատ է ծովի,
Դիեցուցեր կաթն ի ստենէ,
սնուցեր արեամբն կենդանի,
Դաստիարակ մանկանց բարի
տալով զօրէնսն Մովսէսի,
Եւ կերակուր կատարելոց՝
զԱվետարանն Քրիստոսի:
Յայնժամ էիր երանելի,
այսու բնաւից դու ցանկալի՝
Երկնաւորաց եւ երկրացնոց
եւ կենդանեաց բոլոր սեռի:
(Էջ 31-32):

Բայց ո՞ւր է այս ամենը,- տրտմորեն հարցնում է Եդեսիան՝ դիմելով Հայոց աշխարհին: Եվ այս մեծ ցավն ու մայր Եդեսիայի բերանով պոռթկացող տրտունջը արտահայտվում են հռետորական հարցումների միջոցով, ողբերգականությամբ, որը բանաստեղծի անսահման ողբն է իր հայրենիքի եւ ժողովրդի ճակատագրի համար.

Շարունակությունը՝ էջ 7

Մարո Ալազան

Իմ կյանքի ողբերգությունը

Սկիզբը՝ թիվ 7-9, 11, 13-15

ԲԱՆԴԻՄԱՀԻ ԳԵՏԱՓԻՆ

Արեւն իր տեսածից ասես հուզվեց, հեծկլտաց, արտասվեց եւ ամոթի կարմիր շղարշով բարուրված՝ բլուրների հետեւում թաքնվեց: Գիշերը փռեց իր սեւ ու ահարկու թեւերը մեր, ձորի եւ մարդակուլ Բանդիմահի գետի վրա: Երեխաների լացն ու ճիչը մասամբ լռեց, շատերն իրար վրա ընկած, գլուխները սրա-նրա թեւին, մեջքին, փորին դրած քնեցին: Մյուսները կողք կողքի նստած՝ լուռ մտածում էին. մեկը մորն էր հիշում, մյուսը՝ հորը, երրորդը՝ տիկնիկին, չորրորդը՝ եղբորը: Դժվար էր ասել, թե ով ինչի մասին էր մտածում: Իսկ Բանդիմահին անսովոր խշշոցով շարունակում էր իր դարավոր ընթացքը:

Այդ ժամանակ երեխաների ամբոխի միջից դուրս եկավ բարձրահասակ, նիհար մի մարդ եւ դեպի գետը վազեց, մի մեծ քար գրկեց ու գետը մտավ, բայց արագությամբ դուրս եկավ: Մեջքից արձակեց երկար նախշուն մի շալ ու մեզ՝ երեխաներիս, նայելով ասաց.

- Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ, ես կնստեմ, մեջքիս բարձրացեք եւ ինձ պինդ գրկեք:

Երեք տղաներն էլ բարձրացան եւ նրա մեջքին փռվեցին, չորրորդը՝ ես, ինձ գցեցի տղաներ վրա: Նա մեզ՝ չորսիս, ամուր կապեց իր ուսերին եւ մտավ գետը:

- Չվախենա՛ք, երեխանե՛ր, ինձ պինդ բռնեցե՛ք,- հաճախակի կրկնում էր նա:

Ես նայեցի գետին. գետը պտտվեց թե գլուխս՝ չհասկացա, միայն հասկացա, որ ամբողջ մարմնովս ջրի մեջ եմ, եւ այդ մարդու հետ գետում լողում եմ: Մարդը, թեւերին ազատություն տալով, աջ ու ձախ ջուրը չփչփացնելով, դուրս եկավ գետի մյուս ափը: Մեզ արձակեց մեջքից եւ արագությամբ անհետացավ գիշերային խավարում: Մենք լացով նրա հետեւից վազեցինք, բայց շուտով նրա հետքերը կորցրեցինք: Տղաներն ընկերացան միմյանց եւ ինձանից ազատվեցին: Ես, մենակ մնալով, շարունակեցի իմ քարքարոտ եւ անհայտ ճանապարհը. ո՞ւր, չգիտեմ, բայց գնում էի...

Մութն ավելի խտացավ եւ պատեց սարերն ու ձորերը: Փայտի կտորները սեւ ու ֆշշացող օձեր էին թվում ինձ, քարերը՝ սեւ-սեւ գայլեր, որոնք կարծես բերանները բաց՝ դեպի ինձ էին վազում: Մի թմփոցից սարսափահար վեր էի թռչում, հետ-հետ նայում, կարծում էի՝ ահա գայլը ժայռից ցած կթռչի, ինձ թաթերի մեջ կառնի եւ վերջ կտա կյանքիս: Ահն ու սարսափը մեղմացնելու համար բարձրաձայն լալիս, «մամա՛-մամա՛» էի կանչում, բայց մաման չկար ու չկար: Լացիս արձագանքում էին սարերն ու ձորերը. ո՞ր սարերն ու ո՞ր ձորերն էին՝ դժվարանում եմ ասել:

ՎԵՐՋԻՆ ՍԱՅԼԱԿ, ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍ

Հեռվից, շատ հեռվից լսեցի ձիերի սմբակների ռիթմիկ դոփյուններ եւ մարդկային ձայներ... այո՛, մարդկային ձայներ. ե՞րազ է, թե՞ իրականություն... Աչքերս լայն բացած, լսողությունս լարած, շունչս պահած՝ նստել եմ մի մեծ ժայռի վրա ու ինքս ինձ բարձրաձայն մտածում եմ. «Աստվա՛ծ իմ, եթե մարդիկ են, ինչո՞ւ նրանց բառերից ոչինչ չեմ հասկանում... Չէ՛, մարդիկ չեն... Նորից եմ լարում լսողությունս, նորից եմ բառեր որսում, բայց ոչ մի բառ չեմ հասկանում: Գնալով ձայներն ավելի մոտեցան... ուրախացա, որ գայլերի փոխարեն մարդկանց եմ հանդիպում:

Փոշու ամպի միջից երեւացին ինչ-որ ձիավորներ, նրանք նայեցին ինձ, լսեցին իմ լացի ձայնը, բայց... ոչ մի ուշադրություն եւ ոչ մի վերաբերմունք: Գուցե սրանք մարդիկ չեն... Ո՛չ, մարդիկ են՝ մարդկային դեմքերով, շարժուձեւով: «Գուցե ինձ չեն նկատում, ձայնս չեն լսում»,- մտածեցի ես եւ ավելի մոտեցա շարժվող բանակին, ավելի բարձր լացով «մամա՛-մամա՛» կանչեցի: Ձիավորները լուռ եւ անվրդով անցան կողքովս: Հուսահատության եւ սարսափի ծովում խեղդվողի պես բարձրաձայն լալիս, մղկտում, օգնություն եմ կանչում, բայց զուր ջանքեր, իզուր արտասուքներ:

Ձիավորների հետեւից փոքրիկ սայլակներ էին անցնում, որոնց կողքերին կարմիր խաչեր նկատեցի: Սրանք էլ լուռ ու անվրդով անցան կողքովս: Անցնում էր վերջին սայլակը, վերջին հույսը:

- Հռռ?,- լսեցի մի ձայն, եւ սայլակը կանգնեց, միջից շեկ մորուքով ու մազերով մի մարդ դուրս եկավ, ինձ գրկեց եւ սայլակին դրեց, ապա «նո՛ւ, նո՛ւ» ասելով՝ ձիերին քշեց եւ մյուս սայլակներին հասավ ու նրանց դանդաղ ընթացքով առաջ շարժվեց:

Ես անչափ ուրախացա, որ ազատվեցի գիշերային խավարից, սարսափ ազդող լերկ ժայռերից, անդնդախոր մութ ձորերից, ինձ թվացող գայլ ու օձերից: Գնում եմ, ո՞ւր՝ չգիտեմ: Սայլակի անկյունում կծկված նայում եմ փրկարարիս, ինձ կյանք պարգեւող Մարդուն, նրա խոշոր ու ծովի պես կապույտ աչքերին, փառահեղ ու շեկ մորուքին, բարեձեւ կազմվածքին ու կրկին մտածում՝ գնում եմ, ո՞ւր՝ չգիտեմ:

Նա գրպանից հանեց եւ ինձ մեկնեց մի քանի կոնֆետ, որոնք վերցրի ուրախությամբ, բայց կերա տհաճությամբ: Ինձ հարկավոր էր հա՛ց, հա՛ց եւ ոչ թե թթու կոնֆետ, բայց ինչպե՞ս, ի՞նչ լեզվով հասկացնեի: Քիչ հետո նա ինձ հետ խոսեց, ես ոչինչ չհասկացա, ես էլ պատասխանեցի, նա ոչինչ չհասկացավ: Ես լուռ արտասվեցի եւ սայլակի մի անկյունում կծկված՝ նստեցի: Ձիերի ոտքերի ռիթմիկ դոփյուններից նստած տեղումս էլ քնեցի:

Լույսը բացվեց: Ես արթնացա: Նախշուն սնդուկի վրա պառկած եւ մի տաք ծածկոցով ծածկված էի: Նա լվաց իմ կեղտոտ ձեռքերն ու դեմքը, որոնք կեղտից կորցրել էին իրենց բնական գույնը: Բայց ինձ համար կարեւորն այդ չէր, այլ այն, որ ես սնված էի եւ հաց էի երազում, ուտել էի ուզում, բայց ինչպե՞ս, ի՞նչ լեզվով հասկացնեի իմ ցանկությունը: Նա ինձ վերցրեց եւ սայլակի մեջ դրեց ու կատյոլը վերցրած՝ գնաց: Ես նրա հետեւից բարձրաձայն լաց եղա, նա վերադարձավ, ինձ հանգստացնող խոսքեր ասաց, գուրգուրեց եւ գնաց: Շուտով նա վերադարձավ՝ կես բուխանկա հաց թեւի տակին եւ կատյոլը ձեռքին, որից տհաճ, թթու ճաշի հոտ էր փչում: Ես

ագահությամբ, արագ-արագ թուքս կուլ տալով, հացին նայեցի: Նա մի կտոր հաց եւ մի «կռուշկայով» ճաշ ինձ մեկնեց: Ես ուրախությամբ այն վերցրի եւ ագահությամբ կերա, ճաշը թեյի պես խմեցի, իսկ տակին մնացած կաղամբի մնացորդներն էլ մատներով հանեցի ու կերա:

Գնալով իրար հետ մտերմացանք, կապվեցինք, նա, ամեն անգամ ինձ իր կողքին դնելով, ձիերն էր քշում եւ հաճախակի «նո՛ւ, նո՛ւ» ասում, եւ ձիերն արագացնում էին իրենց քայլերը:

Այսպես մենք գնացինք գիշե՛ր, գնացինք ցերե՛կ, շաբաթնե՛ր թե ամիսնե՛ր, չեմ հիշում, բայց հիշում եմ, որ ես ո՛չ նրա անունը իմացա, ո՛չ նա՝ իմը, ո՛չ ես նրան որեւէ անվամբ կոչեցի, ո՛չ նա՝ ինձ, ո՛չ ես նրա լեզուն հասկացա, ո՛չ էլ նա՝ իմը, բայց մենք կամա՛ց-կամա՛ց մտերմացանք, մնջախոսությամբ իրար հասկացանք եւ դարձանք մտերիմներ ու հարազատներ:

Շարունակությունը՝ էջ 8

Համաչափությունը եւ վերածնունդը Փիթեր Բալաքյանի **poեզիայում**

Սկիզբը՝ թիվ 14-15

Փիթեր Բալաքյանի ամենասիրած զգայարանը աչքերն են: Հենց վերջիններս են նրան հնարավորություն ընձեռում առավել խոր ուսումնասիրելու մարմնի եւ հոգու գաղտնիքները.

Նա իր աչքերն է ուղղել ակնապիշ
Դեպի ոսպնյակն իր առաջ դրված:
Տեսարաններն են այդ պահին ձուլվում
Ու երեւում է կետ նարնջագույն:
Կետն այդ հայտնված նման է լուսնի,
Որ պտտվում է շուրջը Պլուտոնի:

Ներկայացված բանաստեղծական դրվագը որոշակիորեն առնչվում է Թորոյի եզրահանգմանը, որն արվել էր «Թորոն Նոսեթում» երկի մեջ. *«Իրադրությունների հոսանքին ընդդեմ/ Մեզ բնությունն է բերում դեմ առ դեմ/, Ճշմարիտ ուղուց մեզ է խոտորում/, Որով մենք նախորդ օրն էինք քայլում»*: Բնության պես մարդկային տեսողությունը գործում է ցիկլերով: Այն վերահաստատում է այն հավերժական դինամիկան, որը ձեւավորում եւ վերաձեւավորում է պատմությունները: Ի հակադրություն դրան՝ գծի պես ձգվող մարդկային միտքը ծնունդ է տվել մեր դարաշրջանի ողբերգություններին, այդ թվում՝ ցեղասպանությունների մեծ մասին: Նման մտածելակերպը կարող է կործանարար հետեւանքներ ունենալ, քանի որ դրա առկայության պարագայում մարդիկ երբեք հետ չեն նայում, չեն խորհում հետեւանքների մասին: Տեսողությունը մարդուն հնարավորություն է տալիս ներդաշնակել հիշողությունը հեռատեսության հետ: Սա ավելի լուրջ խնդիր է, քան մարդկային բանականությունը կարող է լուծել: Ներկայացնենք աչքերին նվիրված մեկ այլ բանաստեղծական դրվագ.

Երանգը ճերմակ ինձ է հիշեցնում
Կտորտանքները սպիտակ մարմարի՝
Ցիր ու ցան եկած շոգ անապատում:
Կտորտանքներն այդ լույս են արձակում
Թուրքական լուսնի շողերի ներքո:

Այստեղ օտարների աչքերն արտացոլում եւ առավել ցայտուն են տեսնում բանաստեղծության հերոսի ճակատագիրը: Օտարների աչքերի մեջ նայելը նրա մտքերին գերբնական ուժ է հաղորդում: Այդ մտքերը մշտապես պտտվում են խեղանդամված ազգի մնացուկների շուրջ: Բանաստեղծության հերոսի երազները կարծես շրջապատում են նրա անցյալն ու ապագան.

Նրա տարիքն էր երեսուներեք,
Երբ առերեսվեց սարսափին ջարդի.

Նա տեսավ կույտեր հայ դիակների,
Երբ գտնվում էր հողում հայրենի:
Ու դողդողացող ձեռքերով նա իր
Այդ դիակներն էր տանում տեղից-տեղ:

Բալաքյանի երկի առաջին մասը վերջանում է նրա պապի վախճանով: Ինչ վերաբերում է երկրորդ դրվագին, ապա դրանում չկան այնպիսի պատկերներ, որոնք կվերաբերեին մշակութային անցյալին: Թեեւ անցյալի վճռորոշ կարգերը գոյություն ունեն բանաստեղծական հերոսի գիտակցության մեջ, սակայն դրանց հետեւանքները սքողված են: Այս փոփոխությունն արտացոլված է երկու մարդու մասնագիտության մեջ. նրանք բժիշկներ էին: Ավագ Բալաքյանն ակնաբույժ էր, իսկ կրտսերը՝ սրտաբան, իսկ սիրտը մի օրգան է, որն առավել խոցելի է տառապանքի հանդեպ: Սրա մասին է խոսվում հետեւյալ բանաստեղծական դրվագում.

Թե կարողնայիր սերդ ցած նետել
Քքվող-փոքրացող հորձանուտի մեջ:
Սեղմվում է այն բախվելով հանկարծ
Խորտակված նավի մնացուկներին:
Եվ հենց այդ պահին դու պիտի տեսնես
Բախումները այն, որ ուժ են տալիս ու
Միավորվում այն տատանումին,
Որը առկա է ծովի երեսին:

Եթե աչքի հիմնական գործառույթն այն է, որ համաձայնեցնի մարդկային շարժումները, ապա սրտի դերն այն է, որ հաշտեցնի, խաղաղություն հաստատի եւ հարթի հակադրությունները: Ուստի սիրտը պիտի առավել զորավոր լինի, քան որեւէ այլ օրգան: Այն պետք է դիմակայի մարդկային կրքերին, վախերին եւ կասկածներին: Պոետի համոզմամբ՝ սրտի հետ աշխատելը մեծ վարպետություն է պահանջում: Այդ աշխատանքի միջոցով հնարավոր է դառնում ճշտել, թե որքանով լավ են հակադրությունները հանդուրժվում եւ հանգուցալուծվում: Բանաստեղծի կարծիքով՝ անհրաժեշտ է հավասարակշռել կարեկցանքն ու անտարբերությունը՝ ինքնաոչնչացումից խուսափելու նպատակով: Բանաստեղծի հոր արձագանքը երեւան է գալիս նրա սառը եւ չոր օտարման միջոցով: *«Նա միավորում է իր վախերը/ վինդզորյան հանգույցի մեջ»* (տե՛ս Bedrosian M., նշվ. աշխ., էջ 200): Որոշ օրերի նա զգում է «ներքին խաբկանք»: Տեսնում է «ջրապտույտներ, որոնց մեջ անհայտանում են տղամարդկանց եւ կանանց ոսկորները». խոսքն այստեղ վերաբերում է ցեղասպանության հիշողություններին:

Ամերիկահայ պոետի երկի վերջում մեղմ լույսը լցվում է եկեղեցու ներսը, ինչի արդյունքում հոգեւորականների սքեմների աստառների կարմիր գույնը վերածվում է վարդագույնի: Այս երանգը հակադրության մեջ է մտնում սաստիկ ցրտի այն զգացողության հետ, որը վերջում տիրել էր Թորոյին: Եկեղեցու մեջ ներխուժած լույսը «հակադրության մեջ է մտնում» բանաստեղծի թիկունքում կանգնած երկու անձանց ներկայության հետ: Նրանց ուժն ու զորությունը չեն կարողանում դիմակայել մահվանը: Նրանց ուժը կայունության մեջ է, որը հավասարակշռված է սարսափի զգացումի եւ անհայտությունը բացահայտելու համար անհրաժեշտ կամքի ուժի հետ: Այդ ուժերը չափազանց անհրաժեշտ են բանաստեղծին: Բայց եւ այնպես, այդ ուժերն անկարող են պահպանել խորաթափանցությունն ու հեռատեսությունը, իսկ առանց դրանց՝ վերածնունդն անհնար է: Այդ հատկանիշները նաեւ կոչված են օգնելու մարդկանց հաղթահարելու երկյուղի զգացումը:

Բալաքյանի գրվածքում պատկերված եկեղեցում եւ դրա կցորդ մասերում մարդիկ հնարավորություն ունեն ընկղմվելու սուրբ ջրերի մեջ՝ եկեղեցական խորհրդանիշների առաջ, իսկ վերջիններս ամոքիչ նշանակություն ու դեր ունեն: Այդ խորհրդանիշներից հատկապես ուշագրավ են Տիրամայրը եւ հրեշտակային ոգիները: Նրանց հայացքներն ուղղված են դեպի այն աստիճանները, որոնց վրա հանգրվանել է պոետը: Այդ խորհրդանիշները լուսավորում են խավարով լցված խորշերը:

Խոսելով Փիթեր Բալաքյանի քնարերգության մասին՝ հարկ է հավելել, որ դրա կարեւոր խորհրդանիշներից է «գորգը»: Այս խորհրդանշանը երեւան է գալիս տարբեր բանաստեղծական շերտերում: Այն իրենից ներկայացնում է մի դրական ու կառուցողական պատկեր, որն իր մեջ ներառում ու միավորում է «պատմության թելերը»: «Մարդկային տան» պես գորգը լի է առեղծվածով, սակայն սա մի առեղծված է, որը խոսում է փարթամ եւ զգայական գեղեցկության միջոցով: Սբ Հովհաննես եղեղեցու ներքնամասի պես գորգը նույնպես հագեցած է միստիկ ուժերով: Սակայն վերջինիս մեջ դրանք իրենցից ներկայացնում են առավել անմիջական եւ շոշափելի իրողություններ: Գորգը, իբրեւ իրապես գոյություն ունեցող մի իր, հիշեցնում է անցյալի մասին: Գորգի խորհրդանշական կերպարը վերածվում է անցյալի ողբերգության վկայի: Դա բանաստեղծի տատի ու պապի ողբերգությունն է: Տաճարի պես Բալաքյանի պատկերած գորգը խոհեր է ծնում: Գորգանախշերը կատարում են այն նույն դերը, որ կատարում էր հինդուիստական մանդալան:

Դրանք կողք կողքի են պահում երեւակայության փոխհակադրված մասերը եւ հավասարակշռություն են ստեղծում իրենց համաչափության ու ամբողջականության միջոցով: Ինչպես ներկայացված է բանաստեղծության մեջ, գորգը ծեծել էին փայտով, ինչի արդյունքում այն կորցրել է իր պատշաճ տեսքը: Սա խաթարել էր կարգ ու կանոնի մասին պատկերացումը, այն, որ «գորգն ունակ էր վերաստեղծվել» մարդկային երեւակայության մեջ: Այն գործընթացը, որի միջով անցնում է պոետն իր բանաստեղծական գրվածքի մեջ, նմանվում է հետզհետե խորացող ցմահ խորհրդածության, որի առարկան վնասված մանդալան է:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ **ըստ ռումինահայ տարբերակի**

Սկիզբը՝ էջ 4

Վեպի կենտրոնում հայերի նոր բնակավայր դարձած ռումինական Ֆոկշան քաղաքն է, պապը, ինքը եւ պապի շուրջ հավաքված ազգային դեմքերը: Ժամանակը՝ 1915-1945, անդրադարձներով՝ մինչեւ վեպի գրության ավարտը: 1945-ը Ռումինիան խորհրդային ենթակայության ենթարկվելու տարին է՝ քաղաքի անվանափոխված «1945-ի մարտի 6-ի» փողոցով:

Ավանդույթի, անցյալի արժեքների հանդեպ հաստատուն մի դրվածք կա վեպի գաղափարական հիմքում, որ պայմանավորում է այսպիսի համեմատության ծնունդը. «Արյունն ավելի դանդաղ է հոսում, քան ժամանակը: Ահա թե ինչու սովորությունները դժվար են փոխվում»: Մանկության հիշողությունների մեջ ամեն ինչ է՝ քաղաքը, թաղը, յուրայինները, մանկության հուշերն ու համերը, կերակուրները:

Համաշխարհային գրականությունը հարուստ է մանկության տարիների հիշողություններով: Բայց այստեղ երանգն այլ է: Վտարանդի հայությունն ամեն ինչի մեջ իր հայրենիքի հիշատակներն է որոնում: Այդ հիշողությամբ հասնում է նուրբ թափանցումների՝ փոխանցելով անգամ «քունջուպուճախների» հոտերը, գրքերի հոտերը, սուրճի բուրմունքը, որի մեկ գավաթի շուրջ անցկացրած պահերը ծիսական արարողության էին վերածվել: Այսպես նա ետադարձ հիշողությամբ մոտ է բերում մի ամբողջ հեռացող աշխարհ, եւ մարդիկ սկսում են խոսել իրենց արյան հետ, որովհետեւ արյունն ունի ձայն եւ հիշողություն:



Ֆոկշանում հայերն ունեին իրենց գերեզմանոցը, ընտանիքները՝ իրենց հին նկարների հավաքածուները, պատմական քարտեզներ, հին երկրից բերած բազմաթիվ պատմություններ, 1915 թ. ընտանիք-գերդաստանների լուսանկարներ՝ նահապետական տոհմերի խմբանկարներ, որոնցից փրկվեցին հատուկենտները: Միասին մնալու միակ տարբերակը մնացին լուսանկարները:

Ուրվագծվում է Ոսկանյան գերդաստանի տոհմածառը՝ Խաչատուր-Գեւորգ-Կարապետ-Պերճ-Վարուժան (ինքը՝ հեղինակը, եղբայրը՝ Մելիք)-Արմինե:

Մոր կողմը պարսկահայեր են՝ Մելիքյաններ, որ վերաբնակվել են Ղարաբաղում, ապա՝ Կարինում: Մորական պապը՝ Սեդրակ, տատը՝ Արշալույս, մայրը՝ Հեղինե: Տոհմաբանությունը խորանում է 300 տարի: Տոհմածառին հաճախակի է անդրադառնում եւ նոր մտաբերումներով լրացումներ ու ճշգրտումներ անում: Սա այս գրքի «Ծննդոց» գլուխն է՝ ով ում սերեց եւ որտեղ եկավ հասավ: Ամեն ինչ պահպանվում է՝ վերածվելով մարդկային կյանքի պատմությունների, իսկ նրա երկու պապերն էլ «շատ լավ պատմողներ էին»:

Հաջորդում են հայերի բազմաթիվ իրական կերպարներ, որոնք մանկուց տպավորվել են հեղինակի հիշողության մեջ:

Ահա հայ գրականության ծանոթ դեմքերից մեկը՝ Հակոբ Սիրունին (Ճոլոյան), եկել է սիբիրյան աքսորից, մտերիմ է եղել իր պապի հետ: Խորհրդային գերիշխանության ներքո անցնելուց հետո Ռումինիայում սկսվեցին բռնությունները: Առաջիններից մեկը 1944 թ. դեկտեմբերի 28-ին ձերբակալվել է Սիրունին՝ Վարուժանի գրչընկերը՝ «Նավասարդի» աշխատակիցը: Նրան տարել են Մոսկվա՝ Լուբյանկա, այնտեղից՝ Մարիինսկի աշխատանքային ճամբար, ուր սոճու խեժ էր հավաքում: Վերադառնում է շատ թուլացած տեսողությամբ՝ ա՛յն աստիճանի, որ կարդալիս դեմքը գրեթե էջին էր հպում: Պատմաբան Եվգենի Տարլեի միջնորդությամբ Ռուսաստանի գիտությունների ակադեմիան Սիրունուն աշխատանքային ճամբարից փոխադրում է Երեւանի պատմության թանգարան՝ հին ձեռագրեր վերծանելու: Բայց նա արդեն հսկողության ներքո էր, եւ աքսորում են երկրորդ անգամ: Պատճառը Բուխարեստի «Արազ» թերթում տպագրած հոդվածն էր Խանջյանի մասին, որի մեջ ողբում էր նրա կորուստը: Իսկ դա նշանակում էր անհարգալից վերաբերմունք Բերիայի հանդեպ: Այս անգամ նրան աքսորում են Պոտմա, ազատվում է Ստալինի մահից հետո՝ նորից մեկնում Երեւան, այնտեղից՝ Ռումինիա:

Ռումինիայից ԳՈՒԼԱԳ ճանապարհով անցել են նաեւ շատ այլ հայեր: Նրանցից մեկը վերադարձից հետո մեռավ՝ ոտքի վրա «Կիլիկիա» երգելիս:

Հեղինակը թվարկում է հայ աքսորականների եւս 15 անուն: Թուրքերից մի կերպ խուսափեցին, բայց ընկան խորհրդային հետաքննության թակարդը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՇԻՐԱՉՅԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Սկիզբը՝ էջ 4

Բերենք եւս երկու բնորոշ օրինակ.

❖❖❖

Ման եմ գալիս ***մութեմութ,***
Քեզ չեմ գտնում, ա՛յ անգութ.
Արեգակն էլ որ բացվի,
Իմ սիրտս հո **մութն է, մութ:**

❖❖❖

Միրքիդ ղուրբան՝ այ ***տերտեր,***
Բոյդ բարդի, չալ բեղեր,
Խելքս տարան՝ բեմուրվաթ,
Քանի՞ կանչեմ՝ ախ **տե՛ր, տե՛ր**:

(Տե՛ս **Աբովյան Խ.,** նշվ. հրատ., հ.1, էջ 187-196):

Սայաթ-Նովայի՝ մուխամմազների հետ միահուսված բայաթիները թեեւ ինքնուրույն չեն եւ առանձին գործառություն չունեն, սակայն անմիջապես նկատվում է, որ սրանց ակունքը նույնպես բանահյուսությունն է ու այնքան հարազատ ժողովրդական մտածելակերպին, որ թվում է, թե դրանք պարզապես Թիֆլիսի բարբառով ստեղծված սայաթնովյան դրոշմով ժողովրդական խաղիկներ են: Այդ իրողությունն առկա է եւ ունի ոչ միայն բառախաղով նմանահունչ հանգավորման, այլեւ իմաստային ենթաշերտերի առավելագույն արտահայտչականության նպատակադրում: Հենց սրանով հավաստվում է, որ հանճարեղ սիրերգուն հրաշալիորեն տիրապետել է նաեւ հայ ժողովրդական բանարվեստին: Համոզվելու համար դիտենք սայաթնովյան 58-րդ խաղը՝ «Խոսքիրըդ մալում իս արի» սկզբնատողով, որն աշուղական մուխամմազի եւ ժողովրդական խաղիկների չափով գրված բայաթիների յուրօրինակ խառնուրդ է. «Էսպես մուխամմազ բայաթիով. Արութինի ասած»,- հավաստվում է խաղի ծանոթագրության մեջ:

Յուրահատուկ է այս խաղի կառուցվածքը. չորս մուխամմազ տներին հաջորդում են մեկական բայաթի-խաղիկ, իսկ հինգերորդին՝ միանգամից չորսը: Այդ խաղի մեջ ընդգրկված վերջից երրորդ բայաթու 1-ին, 2-րդ եւ 4-րդ տողերն ավարտվում են միեւնույն **հազարին** հանգաստեղծ բառով, որը, սակայն, յուրաքանչյուր գործածության դեպքում ունի մյուսներից տարբեր իմաստ.



Արզ իմ անում ***հազարին,***
Հա՛ զարբաբին, **հազարին,**
Սիրտս յարալու արիր՝
Աչքս գուլա **հազարին:**

(Տե՛ս Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, Վարդգես Զարգարյանի աշխատասիրությամբ, «Հայագիտակ» հրատ., Եր., 2013, էջ 153-156: ***Հազարին*** բառի տարբեր նշանակությունների՝ ***բյուր, սոխակ, արյուն***, մեկնաբանությունը տե՛ս Վ. Զարգարյանի բացատրություններում):

Եթե աբովյանական **բայաթի** կոչված բանաստեղծական քառատող կառույցում առաջին եւ չորրորդ տողերն են հանգավորվում «գաղտնի» կամ «թաքուն» հանգաստեղծ բառի եւ նմանահնչյունություն ստեղծող տարիմաստ համանուն-հարանուններով, ապա Սայաթ-Նովան, որ թեեւ առանձին խաղիկներ չի գրել, սակայն դրանք համադրել է մուխամմազի հետ եւ այդ պատճառով էլ իր որոշ խաղեր բնորոշել «մուխամմազ բայաթիով»:

Ինքնարտահայտման այս միջոցը, պատկերավորման այս հնարանքը Սայաթ-Նովան իր թեջնիսներում ու մյուս խաղերում երբեմն էլ վերածել է բառախաղհանելուկի, ինչպես, օրինակ, 32. «Այիբբէնըն կարդացիլ իմ դասէդաս» խաղում է արել մեծ աշուղ-բանաստեղծը:

Սայաթ-Նովայից պահպանված բայաթիներից մեկում հանգաստեղծ **քարասուն** բառը տարբեր իմաստներով գործածված է երեք անգամ.

Հազար տարին մարդու համար **քարասուն,**
Ո՞վ է մնացի աշխարհումս **քարասուն,**
Սայաթ-Նովա, տարին էլավ **քարասուն,**
Դուն մահի հիդ, մահըն քիզ հիդ **հասաս է**:

(Տե՛ս նույն տեղում, էջ 94 եւ էջ 95-ում՝ **քարասուն** բառի՝ Վ. Զարգարյանի բացատրությունները):

Հասաս է հանգադարձից բացի՝ մյուս տողերի **քարասուն** հանգաստեղծ երեք բառերը ձեւով նույն, սակայն իմաստով տարբեր համանուններ են, ինչպես՝ **քառասուն** - քարա սյուն, քարե սյուն, **քարասուն** - քար ասուն, անձայն, չխոսկան, **քարասուն** - քառասուն. չորս տասնյակ նշանակություններով: Ինչ ասել կուզի՝ այս հանելուկը լուծում չէր ունենալու լեզուներ չիմացող ու ոչ հնարագետ շարքային ընթերցողի պարագայում:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայրենասիրական ողբը

Սկիզբը՝ էջ 5

Բայց հարցանեմ, ո՛վ բաղձալի,
բանիս խնդրեմ պատասխանի.
Այժմ ո՞ւր է թագն քո զարդի
եւ կամ պսակն հրաշալի,
Ո՞ւր զարդարանքն դշխոյի՝
հարսին որդւոյ թագաւորի...
Ո՞ւր են մանկունքն առագաստի,
զի՞ ոչ հնչեն զերգսն Դավթի...
Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի,
Կամ նախարարքն ո՞ւր արքայի
այրարատեանդ գաւառի:
Ո՞ւր են իշխանքն, որ առաջի,
կամ՝ զինակիրքն, որ են վերջի,
Ո՞ւր զօրականքն յասպարիզի,
կամ լեգէոնքն՝ ի ճակատի:
Ո՞ւր մեծամեծքն ի բազմոցի,
կամ ո՞ւր սեղանն ամենալի,
Ո՞ւր են ազատքն ի տաճարի,
կամ տեառնորդիքն ի ծաղկոցի:
Ահա բարձաւ այս վաղագոյն,
յոյժ հեռացաւ, ոչ երեւի.
Անուրջք 'ւ երազք էին յայտնի,
այդ ծածկեցան ի զարթմնի:
Այլ փոխանակ այսր ամենի
յոյժ հակառակն տեսանի,
Քանզի նստիս որբ եւ այրի,
տխուր դիմօք՝ զերդ ի սրբի:

(Էջ 33-36):

Սա է, ահա, Հայաստանի փառահեղ անցյալն ու թշվառ ներկան Շնորհալու օրով: Նա էլ ճիշտ նույն վիճակին է եղել, ինչպես Եդեսիան: Պակաս դժբախտ չի եղել նաեւ Անի մայրաքաղաքը: Եվ բոլորովին պատահական չէ, որ Շնորհալին ոչ միայն չի անտեսել հայոց քաղաքների այդ մեծի բախտը, այլեւ Եդեսիային ողբակից է հրավիրում նրան.

Արդ, ժողովեա՛, զդստերդ քո,
վասն իմ ի լաց նիստ 'ւ ի սգի,
Գոչեայ ձայնիւ կականելի,
շարժեայ ի յողբ զամէն հոգի,
Զի զովացումն այրման սրտի
ոչ է այլ ինչ, քան այս լինի:

(Էջ 41):

Այնուհետեւ հեղինակն անցնում է Եդեսիա քաղաքի նկարագրությանը: Ընթերցողներիս աչքի առաջ բացվում է Եդեսիան՝ իր բնական գեղեցկություններով, հարստություններով, շեն ու բերկրալից կյանքով.

Ես մայր էի բազմորդութեան,
անթիւ ծնաց դուստր եւ որդի,
Զորս մայրաբար դիեցուցի,
ի ստեանց իմոց կաթն արբուցի,
Գեղեցկատիպ յօրինեցի,
վայելչապէս զարդարեցի.
Քանզի երկիր պարարտ էի,
աղբիւր կաթին յորդ բղխէի,
Աւետաբեր նման վայրի,
'ւ այլ վերագոյն ես թուէի:
Ջուր կենդանի յինէն բղխէր,
զուարթածաղիկ բոյս յօրինէր,
Գետոց նման վտակ հոսէր,
զբուրաստանս արբուցանէր:

(Էջ 45-46):

Բնությունը եւս այստեղ Շնորհալու համար կարծես ծառայում է որպես երգի նյութ: Ընթերցողն ասես զգում է բնության շունչն ու խաղը եւ այդ ամենի հետ տեսնում, մանավանդ, Եդեսիա քաղաքը: Բնությունն ու քաղաքը կարծես միաձուլված են իրար, լրացնում են մեկը մյուսին: Շնորհալին հանճարեղ նկարչի վրձնին արժանի ձեւով է «նկարել», երփնագրել քաղաքը.

Ծովն ի միջի իմ ծածանէր,
քաղցրիկ օդովն ծիծաղէր,
Ճաղտեղութիւն տղմի քաքրէր,
եւ զհրապարակն զարդարէր,
Բազմագունի տունկ յօրինէր,
որպէս զդրախտն, որ յԵդե էր,
Սաղարթաբեր ծառովք ծաղկէր,
առատագոյն պտղաբերէր,
Տերեւախիտ հեզիկ շարժէր,
հոտ անմահից յիւրմէ բուրէր...
Առաւօտուն ցօղն իջանէր,
ոսկենման ճաճանչ փայլէր:

(Էջ 46-47):

Ակնառու է, որ այս ամենի մեջ զգացվում է բանաստեղծի հույզը: Բնությունը Շնորհալու ողբում ինքնանպատակ չէ: Բնանկարի պայծառ պերճության վրա կարծես տարածվում է մի անհուն թախիծ, դառը տխրություն:

Բայց ի հասեալ ներկայական
ժամանակիս, որ դիպեցան,
Բարիքն ամէն սպառեցան,
եւ քաղցրութիւնքն դառնացան,
Եւ երանի տալոյն փոխան,
զիս եղկելի այժմիկ կարդան:
Այդ թշնամեաց դասքն խնդան,
եւ սիրելիք ձայնիւ ողբան...

(Էջ 51)

Եվ աստիճանաբար Շնորհալին անցնում է Եդեսիայի կործանման նկարագրությանը՝ քաղաքի պաշարում, մարտերով պաշտպանություն եւ առում, կոտորած... Ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, *«.... այդ շատ սովորական կրկնված երեւույթ էր այն դարերի քաղաքական կյանքի մեջ: Գրեթե բոլորովին նման ձեւով, ըստ Արիստակես Լաստիվերտցու, եղել է եւ Անի քաղաքի անկումը՝ Եդեսիայի դեպքից ութսուն տարի առաջ՝ 1064 թ., Ներսես Շնորհալին եթե անձամբ ներկա չի եղել այդպիսի ռազմական վայրագ գործողությունների, անշուշտ, հաճախ լսել է ոչ միայն Եդեսիայի, այլեւ ուրիշ բերդերի մասին: Եվ նա հասուն արվեստով եղերերգում է Եդեսիայի կործանումը, մեծ տաղանդով եւ բանաստեղծական կենդանի հյուսվածքով ու կարգավորյալ շարադրությամբ արձանագրում է միջնադարյան բարբարոսական ռազմական գործողությունների ընդարձակ ռեալիստական պատկերը»* (Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երեւան, 1970, էջ 137):

Սկզբում հեղինակը համեմատաբար հանգիստ պատմում է Եդեսիայի իշխանների հետզհետե թուլացումը շրջական մահմեդականներից՝ հագարացիներից: Սակայն երբ հասնում է բուն դեպքին, նա ատելությամբ եւ թանձր գույներով է նկարում թշնամիների արարքները: Մոռացվում են անցյալի փառքի օրերը՝ «որպէս ծաղիկ ամարայնի», եւ հիմա՝

Սուրն անողորմ անօրինի,
որ մեր արենս է ի սովի,
Որ չէ յագեալ եւ ոչ յագի
մինչեւ ի գալ կատարածի...

(Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, էջ 39):

Շնորհալին ողբի տրամադրության համընդհանուր երանգից աստիճանաբար անցնում է կոնկրետության, հասնում ողբի բուն պատճառների նկարագրին: Եթե մինչ այդ այն ընդհանուր մարդկային ապրում էր, վերաբերում էր համայն քրիստոնյա աշխարհին, ապա այնուհետեւ շեշտվում է մի քաղաքի գրավման եւ կոտորածի փաստը, դրանով իսկ պայմանավորված ընդհանրապես մարդու շինարար, խաղաղ կյանքի փոխարեն բնականությունից շեղված, նրան արյուն ու ավեր պարտադրած վիճակը: Սա է Շնորհալու պոեմի ընդհանրացման մեծ ուժը, նրա համամարդկային բովանդակությունը:

Շարունակությունը՝ էջ 8

Հայրենասիրական ողբը

Սկիզբը՝ էջ 7

Պոեմի գործողությունը ձեռք է բերում ուժեղ դինամիկա, դառնում շարունակ փոփոխվող մի նկար: Մեր աչքի առաջ ասես շարժվում են մե՛ր դրսից հարձակվողները, մե՛ր եդեսիացիները, որոնք պաշտպանվում են ներսից, տեսնում ենք միաժամանակ թշվառների ծանր դրությունը եւ թշնամիների եղեռնագործությունները: Եվ այս ամենը վիպերգված է մեծ վարպետությամբ, դառը կսկիծով: Դա մեծ հայրենասերի ողբն է, ողբ երբեմնի շեն ու կանգուն, իսկ այժմ ավերված ու ապականված քաղաքի համար: Եվ որքան առաջ է գնում քերթվածը, այնքան ավելի ազդու եւ խիստ է դառնում Շնորհալու խոսքը.

Եւ որպէս գայլ ի հօտ գառանց՝
ի մէջ նոցունց անկանէին:
Առ հասարակ կոտորէին,
արեան վտակք հոսէին,
Ձերիտասարդս եւ զմանկունս
անխնայապէս խողխողէին:
Յալիս ծերոց ոչ գթային,
ոչ ի հասակն տղային...
Քանզի յորժամ գայքն մտին
եւ շունքն լիրբք պաշարեցին,
Հօտս ոչխարացն ցրուեցին,
զանմեղ գառնիս պատառեցին:
(էջ 73-74):

Չնայած քաղաքի բնակչության խիզախությանն ու քաջությանը՝ թշնամիներին հաջորդվում է կոտրել պարիսպը եւ ներխուժել քաղաք: Անհուն ցավից հառաչում է մայր Եդեսիան.

Զոր աստանօր սիրտ իմ ճմլի
՝ւ երիկամունքս գալարին,
Յաւ հարկանի որովայնիս,
միտք եւ հոգիս իմ այլայլին,
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին
եւ զառաւօտն մթագին...
(էջ 66):

Կատարվում է սոսկալի արյունահեղ կոտորած: Մարդկային թշվառությունը մեծ է, եւ չի կարելի առանց հուզվելու, առանց վրեժի գիտակցության կարդալ այդ տողերը: Դրանք, նկարագիր լինելով հանդերձ, ե՛ւ ողբ են, ե՛ւ ցավի ճիչ, ե՛ւ վրեժի կոչ: Սակայն իրար հաջորդող ծանրաշունչ պատկերները չեն ընկալվում որպես անել հոռետեսություն: Անգամ քաղաքի անկումից հետո ուժի մեջ է մնում եդեսիացիների բարոյական հաղթանակի լավատեսական ավարտը: Անկոտրում է պարտված քաղաքի կամքը, որովհետեւ նա գիտի՝ չարի հաղթանակը երբեք հավերժ չէ: Ահա թե ինչու Շնորհալին յուրովի սպանիչ դատավճիռ է կայացնում թշնամուն, նրա հաղթանակի մեջ տեսնում է ոչ միայն պարտություն, այլեւ՝ կործանման սաղմեր.

Արդ, մի՛ պարծիր, ո՛վ անզգամ,
ժանտ եւ ժպիրհ, չարեօք փարթամ,
Թէ զօրաւոր քոյին ձեռամբ
զիս հնձեցէր դու տարաժամ
Կամ Մահմետին քո պաշտամամբ
առեր զամուրս անյաղթական:
Եվ մի՛ կարծեր, ամբարտաւան,
զքեզ հսկայ եւ յաղթանդամ,
Քանզի նման ես դու մկան,
որ սատկմամբ պղծէ զթան...
Այսպէս եւ դու, թշվառուակա՛ն,
մնա՛ց չարեաց քեզ ի վախճան,
Թէ ՝ւ ինձ եղեր մահու դարան,
գուբ փորեցէր կորտական...
(Էջ 106-108):

Եվ այնքանով, որ կործանված Եդեսիան կասկածից վեր է հանում իր վերջնական հաղթանակը, միանգամայն հասկանալի է, որ նա անեծքի ձեւով կառուցած իր խոսքի մեջ այժմ արդեն հակառակորդին է ցանկանում տեսնել օրհասական նույնանման վիճակներում: Ասվածի ապացույց կարող է հանդիսանալ հետեւյալ հատվածը.

Որդիք ձեր՝ որբ, կանայք՝ գերեալ,
լիցքն մոտողք եւ աստանդեալ,
Ելցեն յարկացն տարագրեալ,
փոխան իմոցն տատանեալ:
Զինչս եւ զգոյս ձեր վաստակեալ,
առցէն օտարք յափշտակեալ...
Այլ եղիջի՛ք դուք տատանեալ,

հանդերձ ծննդովք՝ յազգէ ջնջեալ,
Ձեր յիշատակ յերկրէ բարձրեալ,
ի մէջ մարդկան ոչ յիշեցեալ:
(Էջ 111-112):

Բարկացայտ եւ ցասումնալից անեծքներից հետո հեղինակը հորինում է մի զորեղ հակադրություն. որդեկորույս մայրն առանձին գորովով ու գուրգուրանքով է վերաբերվում նահատակված զավակներին: Իբրեւ մայր, նա խանդակաթ սիրով է նկարագրում իր զավակների հարությունն ու երանավետ կյանքն «անմահական դրախտում».

Յորժամ կենաց ցողոյն արբջիք,
վաղվաղակի բուսանիցիք.
Որոտընդոստ վերաբերիք,
յանկարծակի վերերեւիք,
Որպէս ծաղիկ բողբոջիցիք,
սաղարթագեղ պաճուճիցիք:
Աշխատեցայք իբրեւ մշակք,
ի տապ տօթոյ աստ քրտնեցիք,
Յորժամ հնձէք, զոր ցանեցիք,
յանմահական դրախտին հանգչիք,
Ընդ զովարար տնկոյն նստիք
եւ յաղբերէն կենաց արբջիք...
Անճառ լուսով լուսաւորիք
եւ թագ ի գլուխ պսակեսջիք:
(Էջ 122-123):

Ողբի վերջում եղերական զգացումը վերափոխվում է լավատեսության. Եդեսիան իր որդիներին պարտադրում է հանել «տխրարար» զգեստը.

Հանէք զգեստդ տխրարար,
զգեցի՛ք պայծառ, ուրախարար:
Մի՛ տրտմիցիք այլազգաբար՝
զերդ հեթանոս, կամ՝ հրէաբար,
Մի՛ ի յերկիր հայիք ի չար
եւ զայս կենաց առէք վճար:
Մի՛ յառօրեայս անասնաբար
դնէի զլոյս իբր անհանճար...
Մի՛ որք մեռանն աստ չարաչար
լացի եւ ողբացի անյուսաբար,
Քանզի ունիմք Տէր բարերար
որ բժշկէ զմեզ տիրաբար:
(Էջ 126-127):

Այս ավարտը մեծ արվեստին հատուկ լավատեսությամբ ապրեցնող է, եւ ապրեցնելու այդ մարդկայնորեն հիմնավորված գաղտնիքն էլ Շնորհալու պոեմին տալիս է չխամրող արժեք.

՝Ի ես համբառնամ զաչս ի բարձանց,
զձեզ տեսանեմ շուրջ ժողոված,
Ընդ որ խնդամ եւ ցնծացած՝
գիրկս արկանեմ եւ զուարճացած,
Եւ տխրական զգեստ մերկացած՝
կարմիր կանանչ գոյն զգեցայց:
(Էջ 132):

Շնորհալին մեծ հույս ուներ, որ խաչակրաց երկրորդ արշավանքը պետք է սկսվի՝ օգնելու արեւելյան քրիստոնյաներին եւ փրկելու նրանց մահմեդականների ձեռքից.

Լինի աշխարհ քրիստոնէից,
յանչափ յանբաւ բարեաց լցած,
Լինի առատ պտուղ բազմաց
սեթմանց ՝ւ ամէն պտղաբերաց:
Մարդիկ ցնծան զուարճացած,
յուտել, յըմպելն պարարած,
Որք վա՜յ ասեն վաղ մեռելոց,
եղո՜ւկ կարդան գերեզմանաց:
Թէ՝ Է՞ր չհասիք յաւուրս կենաց,
յանգիւտ բարիս հասարակաց:
(Էջ 131):

Ահա թե ինչ է երազում Ներսես Շնորհալին: Նրա «Ողբը» լի է կյանքի ծարավով: Շնորհալու գլուխգործոցն իր գեղարվեստական ամբողջության մեջ ներդաշն մի ստեղծագործություն է, որը, իսկապես, չէր կարող չունենալ իր հետեւորդները:

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Մարո ԱԼԱՋԱՆ

Սկիզբը՝ էջ 5

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Գիշեր ու ցերեկ գնալուց հետո հասանք Էջմիածին: Էջմիածինը գավառական մի փոքրիկ քաղաք էր՝ միահարկ տներով, հողածածկ կտուրներով: Բայց այս փոքրիկ քաղաքին վեհություն ու խորհրդավորություն էին հաղորդում իր վանքերն ու եկեղեցիները՝ Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը, Աստվածածինն ու Էջմիածնի Մայր տաճարը: Սա գյուղաքաղաք էր՝ իր արտաքին տեսքով, նիստ ու կացով, նեղլիկ ոլորապտույտ կեղտոտ փողոցներով, աղմկոտ շուկայով, բեռնված ավանակներով, նստած ու կանգնած ուղտերի քարավաններով, պապենական խարխուլ ու ճռճռան սայլերով: Սա տիպիկ ասիական գավառական փոքրիկ քաղաք էր, որն այդ օրերին դարձել էր ողբի ու լացի, գաղթականության օրրան: Գաղթականներն ավելի շատ էին, քան բնիկները:

Ամենուր բաց երկնքի, կիզիչ արեւի տակ ծվարած էին տասնյակ հազարավոր ընտանիքներ: Մի տեղ քնած էին թուրքի յաթաղանից փրկվածները, մեկ այլ տեղ ճաշ էին եփում, մեկ ուրիշ տեղ հաց էին ուտում, մեկ այլում՝ ծանր հիվանդն էր ցավերի մեջ տառապում, քիչ այն կողմ՝ հարազատի դիակի մոտ նստած արտասվում էին... Ծնողներ կորցրած մի խումբ մանուկներ էլ, իրար վրա ընկած, ճանճերի ամպով բարուրված, խոր քնած էին: Եվ ապա մենք էլ գնում էինք ողբի, լացի ու դիակների միջով՝ մեր տեղը գտնելու:

Մեր զորամասը մի ընդարձակ, արեւից խանձված դաշտում՝ վճիտ մի առվակի ափին, իր վրանները խփեց: Ես էլ իմ ռուս փրկչի հետ սկսեցի ապրել մեր փոքրիկ սայլակում:

❖❖❖

Մի առավոտ՝ նախաճաշից հետո, իմ ռուս բարեկամը մազերս սանրեց, ափիս մեջ մի տուփ գույնզգույն մոմպաս դրեց, գրպանումս՝ մի կտոր սեւ հաց, եւ ձեռքիցս բռնած՝ գնացինք, ո՞ւր՝ չգիտեմ: Քիչ հետո մտանք Սուրբ Էջմիածնի վանքի բակը: Վանքի պատերի տակ կողք կողքի պառկած ու նստած էին գաղթականներ. ամենուր լաց էր ու հառաչանք, տնքացող հիվանդներ, անապաստան, կիսամերկ, քաղցած, կեղտոտ մանուկներ՝ դալուկ դեմքերով: Իսկ նրանցից քիչ հեռու զբոսնում էին երկար ու սեւ շորերով, սեւ պոպոզներով, բեղ ու մորուքով, ասես մոմագույն դեմքով ու ձեռքերով մարդիկ: Գուցե նրանց սպիտակ ու մոմագույն ձեռքերն ինձ համար աննկատ մնային, եթե իմ ձեռքերն այնքան սեւ ու կեղտոտ չլինեին:

Էջմիածնի Մայր տաճարի շուրջը մի պտույտ կատարելուց հետո դուրս եկանք նրա բակից եւ մտանք ավելի ընդարձակ մի այլ բակ, ուր ծփում էր մանուկների աղմկոտ ծովը: Դա հոգեւոր ճեմարանի բակն էր՝ լեցուն որբերով:

- Ա՜խ, երանի բարերարս ինձ այստեղ թողներ, որ ես էլ սրանց ժխորին խառնվեի, սրանց պես ազատ խաղայի՝ վազեի, բռնեի, թռչեի, ընկնեի, կանգնեի եւ վերջապես ազատվեի մնջախոսությունից: Բայց ինչպե՞ս, ի՞նչ լեզվով ցանկությունս հայտնեի:

Նա, սրան-նրան հարցեր տալով, մոտեցավ բարձրահասակ, գեղեցկադեմ եւ փարթամ մի կնոջ: Ինձ, նրան ցույց տալով, ինչ-որ բան ասաց. կինը, գլուխս շոյելով, հարցրեց.

- Աչի՛կ, անունդ ի՞նչ է:

- Մարո՛,- պատասխանեցի ես եւ շատ ուրախացա, որ ինձ հետ մեկը հայերեն խոսեց:

- Մա՞րո, ուզո՞ւմ ես այստեղ մնալ, այս երեխաների հետ խաղալ:

- Ուզում եմ,- կարճ կտրեցի ես:

Փարթամ կինը բարերարիս ռուսերեն ինչ-որ բան ասաց, նա ինձ գրկեց ու համբուրեց եւ հետ-հետ նայելով, ինձ ժպտալով՝ դանդաղ քայլերով գնաց:

Շարունակելի

Համաչափությունը...

Սկիզբը՝ էջ 6

Բանաստեղծի խորհրդածության հոգեւոր ու գեղարվեստական ներուժն առավել ուժգին է, քանզի նրա եւ պատկերված գորգի ճակատագրերը փոխկապակցված են:

Բանաստեղծությունը սկսվում է այն պահից, երբ պոետը մանուկ հասակում քնած է «կաշան» տեսակի սանրված բրդի վրա, որը փռված էր տան հյուրասենյակի հատակին: Սա մի տեսարան է, որը ծանոթ է հայ տարագիրներից շատերի երեխաներին եւ թոռներին: Կարելի է ասել, որ սա այդ մանուկների առաջին շփումն էր Հին Աշխարհի հետ: Նրանք առաջին անգամ շփվում էին այդ աշխարհի հետ՝ հայրենիքից բերված ճոխ գորգերին եւ ասեղնագործաց իրերին հպվելու միջոցով: Հայկական գորգը ներկված է բնական գունանյութերով՝ արմատներից, հատապտուղներից ու տերեւներից: Առանձնապես ուշադրություն է գրավում հայկական կանաչը: Նույնիսկ բնական խոտի կանաչը չունի այն մոգական գրավչությունը, որն ունի ամերիկահայ պոետի պատկերած գորգի կանաչը:

Ժամանակի ընթացքում այն, ինչ մի ժամանակ հանդիսանում էր պատկերների հնամաշ պահեստարան, սկսում է մարմնավորել բանաստեղծի պատմական ինքնությունը, եւ երբ դա տեղի է ունենում, մեր զգացողությունն այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում բանաստեղծական հերոսը, դառնում է առավել բարդ ու խճճված: Այն, ինչ տեղի էր ունեցել բանաստեղծության հերոսի հետ, տեղի էր ունեցել նաեւ գորգի հետ: Բալաքյանի նկարագրած հայկական գորգը հնարավորություն է ընձեռում մանրազնին կերպով հետազոտելու հայոց ճակատագիրը: Գորգի զարդանախշերի որ հատվածին էլ նայում է բանաստեղծը, դրա «բուրդը կարծես նահանջում է եւ արձագանքող, նյարդայնացնող ձայներ արձակում» (տե՛ս Bedrosian M., նշվ. աշխ., էջ 202):

Շարունակելի

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստորագրված է 1.9.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ